Ազգ
Azg
14 ՅՈՒՆՈՒԱՐ 2011 ՈՒՐԲԱԹ 4(4623)
ISSN: 1829-1651

# «Տեսել եմ, թե ինչպես են հայերին պատգամբներից ցած նետում»

*Բաքվի ջարդերից անցել է 21 տարի*

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**Էդիտա Հարությունյանը** Բաքվի ակադեմիայի միակ հայ ներկայացուցիչն էր:

Թեպետ որոշակի խտրականություն կար նրա նկատմամբ, գիտական հոդվածների տակ ուրիշի ստորագրությունն էր, սակայն մինչեւ 1988-ի դեկտեմբերը ավագ գիտաշխատողն իր հանդեպ թշնամանք ու ատելություն չէր զգում:

Ամեն ինչ սկսվեց Ալիեւի նախագահությունից: Հայերի նկատմամբ ակտիվ հետապնդումն ու զանգվածային սպանությունները սկսվեցին ղարաբաղյան հարցի բարձրացումից հետո: Հարազատները, ընկերները, որ միասին սեղան էին նստել, հաց կիսել, դարձան ոխերիմ թշնամիներ:



«Սումգայիթից հետո ոչ ոք չէր սպասում, որ նման բան կլինի նաեւ Բաքվում: Այդ ժամանակ Բաքվում ապրում էր ավելի քան 200.000 հայ: Երբ կոտորածները սկսվեցին, վախենում էինք փողոց դուրս գալ, դեմքերս շալով ծածկում էինք, որ չիմանային՝ հայ ենք: Դա ավելի սարսափելի էր, քան պատերազմը: Ես ու մայրս Բաքվից փախանք, եղբայրս մնաց: 1989-ին կարողացավ տանիքների վրայով փախչել ու գալ Հայաստան: Ամեն ինչ կորցրինք: Մինչեւ հիմա էլ սարսափով եմ հիշում Բաքվի կայարանի տեսարանը: Շուրջբոլորը խարույկներ էին վառել, լաց, բղավոց, միմյանց հրմշտում էին», հիշում է Էդիտա Հարությունյանը:

Տես էջ 2

# Հիմա կարեւորը չխանգարելն է

Հայաստանի, Ռուսաստանի եւ Ադրբեջանի արտգործնախարարները, ամենայն հավանականությամբ եւ Ռուսաստանի ԱԳ նախարար **Սերգեյ Լավրովի** հայտարարած կարծիքով, կհանդիպեն հունվարին՝ շարունակելու ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցությունները:

Թերեւս այս հանդիպումն էլ նախագահական եռակողմ հերթական հանդիպում նախապատրաստելու մտադրության մեջ կարող է տեղավորվել, ինչպես ներկայացրել է Լավրովը, չնայած չպետք է մոռանալ, որ վերջին նախատեսված նման հանդիպումն այդպես էլ իրականություն չդարձավ անցյալ տարեվերջին՝ Աստանայում, երբ հնգակողմ հայտարարությունը ստորագրած Ադրբեջանի նախագահ Ալիեւ կրտսերը նախընտրեց վերջին շրջանում իր վարքագիծը բնորոշ միակ քայլը՝ փախուստը:

Անցյալ տարին ամփոփող ՌԴ արտգործնախարարության ղեկավարն ասուլիսում բացատրել է, թե արտգործնախարարների այդ շփումներով փորձ է արվում անդրադառնալու այն «2-3» հարցերին, որոնք, ըստ ՌԴ ԱԳ նախարարի, «թեեւ աննշան են արդեն համաձայնեցված մյուս հարցերի համեմատությամբ, բայց ավելի բարդ են»: Ընդ որում, Ռուսաստանի այդ ջանքերը համատեղված են ԵԱՀԿ Մինսկի խմբի մյուս համանախագահող երկրների ներկայացուցիչների հետ:

Այդուհանդերձ, ըստ Լավրովի, բացի համանախագահական ջանքերից՝ Ռուսաստանը, ի դեմս նախագահ Դմիտրի Մեդվեդեւի, ջանում է օգտագործել Հայաստանի եւ Ադրբեջանի հետ ունեցած իր հարաբերությունները՝ առավել խթանելու կարգավորման գործընթացը, իհարկե՝ այդ ամենը համաձայնեցված համանախագահող Ֆրանսիայի եւ ԱՄՆ-ի հետ:

«Կարգավորման ներկա փուլում կարեւորը չխանգարելն է», նշել է Լավրովը՝ անդրադառնալով այլ ատյաններում ղարաբաղյան հարցը քննարկման առարկա դարձնելու փորձերին. որպիսիք նախաձեռնում է միայն Ադրբեջանը:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ՎԻԵՆՆԱ**

# ԵԱՀԿ հերթական նախագահողի հերթական չլինելու խոստումները

ԵԱՀԿ տարածաշրջանում չլուծված խնդիրների առնչությամբ այս կազմակերպության անելիք անհրաժեշտ քայլերի մասին երեկ խոսել է այժմ այս կառույցում նախագահող Լիտվայի արտգործնախարար **Աուդրոնիուս Աժուբալիսը**: «ԵԱՀԿ տարածքում գոյություն ունեցող հակամարտությունների կարգավորումը խաղաղ եւ բանակցային ճանապարհով պետք է լինի ամենակարեւոր պարտավորությունը», հայտարարել է լիտվական արտաքին գերատեսչության ղեկավարը:

Նրա խոսքերով, ԵԱՀԿ լիտվական նախագահությունն աշխատելու է խթանել Մոլդովայի առնչությամբ «5+2» ձեւաչափով ընթացող բանակցությունները, օգտագործել Ժնեւյան գործընթացը՝ վերականգնելու վստահությունն ու աշխատելու վերականգնել նաեւ ԵԱՀԿ ներկայությունը Վրաստանում: Աուդրոնիուս Աժուբալիսը, ըստ ԵԱՀԿ պաշտոնական կայքէջի, նաեւ հայտարարել է, թե Լիտվան աջակցելու է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների ջանքերին՝ նոր լիցք հաղորդելու ղարաբաղյան հակամարտության կարգավորման «քաղաքական բանակցություններին»:

Լիտվայի ԱԳ նախարարը ելույթ ունենալով Վիեննայում ԵԱՀԿ մշտական խորհրդում նախագահությունը ստանձնելու արարողությանը՝ անդրադարձել է նաեւ Բելառուսում ընտրությունների անհաջող ընթացքին, խոսել է մամուլի ազատության կարեւորությունից: Իսկ որպես ԵԱՀԿ-ում լիտվական նախագահության առաջնահերթություններ են նշվել աջակցությունը հակամարտությունների կարգավորմանը, ԵԱՀԿ տարածքի անդրազգային սպառնալիքների դեմ պայքարի ջանքերի մեծացումը, հանդուրժողականության խթանումը կրթության միջոցով, էներգետիկ անվտանգության ոլորտում ընդհանուր սկզբունքների մշակումը եւ ենթատարածաշրջանային համագործակցության խթանումը:

Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



# Գեւորգ Կոստանյանը՝ ՀՀ զինվորական դատախազ

Նախագահ Սերժ Սարգսյանի հրամանագրով Արմեն Խաչատուրյանն ազատվել է Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազի, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալի պաշտոնից: Նախագահի մամուլի գրասենյակի տեղեկացմամբ, երկրի ղեկավարի կարգադրությամբ նախագահի օգնականի պաշտոնից ազատվել է Գեւորգ Կոստանյանը՝ նախագահի մեկ այլ հրամանագրով նշանակվելով զինվորական դատախազ, գլխավոր դատախազի տեղակալ: Գեւորգ Սուրիկի Կոստանյանը ծնվել է Երեւանում 04.10.1977թ.: 1999թ. ավարտել է Երեւանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը, այժմ դասախոսում է նույն ֆակուլտետում: Հեղինակ է մեկ տասնյակ գիտական հոդվածների ու մենագրությունների, տիրապետում է անգլերեն եւ ռուսերեն լեզուներին: Կոստանյանը ծառայել է ՀՀ զինված ուժերում, ամուսնացած է, ունի դուստր եւ որդի:

Հ. Ա.

**ՀԱՄԲՈՒՐԳ**

# Հրազենից վիրավոր 39-ամյա Վաչագան Վ.-ի վիճակը կայուն ծանր է

Մեր թերթի հունվարի 13-ի համարում հաղորդել էինք Համբուրգում երկու խմբավորումների միջեւ տեղի ունեցած վիճաբանության, այդուհետեւ հրազենից թիկունքից վիրավորված 39-ամյա հայի մասին: Երեկ գերմանական էլեկտրոնային լրատվամիջոցները մանրամասներ էին հավելել մեզ ծանոթ պատմությանը:

Հունվարի 11-ին ժամը 20.40-ին Համբուրգի Լոհբրյուգգեի սպորտային կենտրոններից մեկում, որը նաեւ ժամանցի վայր է, վեճ է սկսվել արական սեռի 17 ներկայացուցիչների միջեւ, որն ավարտվել է կրակոցներով: «Համբուրգեր մորգեն փոստի» տեղեկություններով, երկու խմբավորումները, որոնց ներկայացուցիչները ծագումով Հայաստանից են, թշնամացած հարաբերություններ են ունեցել: Կենտրոնի մենեջերը պարզաբանել է, թե մի խումբն իրենց ծանոթ է եղել, նրանք հաճախ են այցելել կենտրոն ֆուտբոլ խաղալու: Նրանց առաջարկվել է հանգիստ զրուցելու համար հավաքվել պոկերի սենյակում: Բայց հանգիստ զրույցի փոխարեն դրությունը սրվել է: Լսվել են կրակոցներ: Ոստիկանության տվյալներով, թիկունքից մահացու վիրավորված 39-ամյա Վաչագան Վ.-ն հարել է խմբավորումներից մեկին եւ արդեն ծանոթ է եղել ոստիկանությանը, ըստ այլ աղբյուրի՝ գողություն կատարելու փաստով: Գետնին պառկած վիրավորին թողնելով մենակ, մյուսներն արագ փախուստի են դիմել պատուհանից, ըստ ականատեսների 5 ավտոմեքենայով ճողոպրել դեպքի վայրից: Վիրավոր Վաչագան Վ.-ին շտապ վիրահատել են: Ըստ հիվանդանոցի խոսնակի, նրա վիճակը կայուն է, բայց ծանր, արհեստական շնչառություն են տալիս: Նրան դեռ չեն հարցաքննել՝ ի վիճակի չէ խոսել: Առայժմ հայտնի չեն ոչ մասնակիցների անունները, ոչ էլ կռվի շարժառիթները: Պոկերի սենյակում իրավապահ մարմինները հայտնաբերել են 9 մմ փամփուշտ, 9 մմ փամփշտապարկուճ, տարբեր չափերի մի շարք այլ պարկուճներ: Սպորտային կենտրոնի անվտանգության պահպանության տեսանկարահանող համակարգը միացված է եղել, ժապավենը հանձնվել է քննության, փնտրվում են վկաներ:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գերմանիա

# Թուրքիա-Իսրայել ճգնաժամը չի հաղթահարվում

*Ոչ էլ կհաղթահարվի, քանի դեռ հնչում են «ամբարտավանության» փոխադարձ մեղադրանքները*

Անցյալ տարվա վերջերին թվում էր, թե իսրայելական եւ թուրքական կողմերը համատեղ ջանքերով հաղթահարում են «Մավի Մարմարա» նավի միջադեպով պայմանավորված Թուրքիա-Իսրայել ճգնաժամը: Մանավանդ որ երկու երկրների արտգործնախարարության պատասխանատու աշխատողներ հանդիպումներ էին ունեցել Ցյուրիխում: Սակայն նավի տախտակամածում կացիններով, դանակներով, երկաթե ձողերով կազմպատրաստ, իսրայելական հատուկ ջոկատի հարձակմանն սպասող 9 թուրք ուղեւորի սպանության համար Իսրայելից պաշտոնական ներողություն խնդրելու պահանջում Անկարայի համառությունը գերազանցեց բոլոր ենթադրությունները:

Իսրայելը համաձայնեց պաշտոնական ներողության փոխարեն ափսոսանք հայտնել միջադեպի առնչությամբ, իսկ փոխհատուցումը վճարել ոչ թե պաշտոնապես Թուրքիային, այլ զոհվածների հարազատներին: Այսպիսով, թուրք-իսրայելական ճգնաժամը վերադարձավ ելման կետ: Մինչդեռ Թուրքիան դեռեւս հունիսից այդ ներողությանն էր սպասում:

Այս ամենից հետո սպասել, որ Իսրայելը ներողություն կխնդրի Թուրքիայից, իրատեսական չէ: Ոչ էլ զոհվածներն են Թուրքիայի խնդիրը, Գազայի հումանիտար աղետը՝ առավել եւս: Պարզապես Թուրքիան տարածաշրջանում տառապում է քաղաքական զարգացումներին միջամտելու հավակնություններով: Դա ենթադրում է առանցքային դերակատարում, որի ստանձնումն ու հաստատումը իրականացումը անխուսափելի է դարձնում, որ նա ձայնի իրավունք ունենա անմիջականորեն ԱՄՆ-ի վերահսկողությամբ գործող որոշումների կայացման տարածաշրջանային մեխանիզմում:

Այլ կերպ, իրատեսական չէ նաեւ Թուրքիայի ընդգրկումը այդ մեխանիզմում: Սա նշանակում է, որ Թուրքիա-Իսրայել ճգնաժամը դեռեւս կծավալվի, դրա ծավալմանը զուգընթաց կհնչեն փոխադարձ մեղադրանքներ: Համենայն դեպս Քաթար կատարած այցելության ընթացքում, ինչպես երեկ նշել է «Դունիա Բուլթենի» կայքէջը, Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը «Ալ Ջազիրա» հեռուստաընկերության հարցերին պատասխանելիս վերստին հարձակման թիրախ է դարձրել Իսրայելին:

Վարչապետ Էրդողանն ասել է, որ Թուրքիան չի կարող վերանայել որդեգրած դիրքորոշումը Իսրայելի նկատմամբ, քանի դեռ անփոփոխ է մնում Իսրայելի վարչապետ Բենիամին Նաթանյահուի կառավարության քաղաքականությունը: Այնուհետեւ նա, որակելով դիվանագիտական քաղաքավարության տեսանելի եւ անտեսանելի բոլոր կանոնները, ավելացրել է. «Իսրայելի ներկա վարչակարգը, իմ խորին համոզմամբ, այդ երկրի պատմության մեջ ամենաանփառունակ վարչակարգն է: Քանի դեռ Թել Ավիվը չի հրաժարվել որդեգրած դիրքորոշումից, Թուրքիան Իսրայելի հետ բանակցությունների սեղանին չի նստի, ոչ էլ կնորոգի մինչ այդ ստորագրված պայմանագրերը: Դրանից իհարկե կտուժի Իսրայելը եւ կմեկուսանա տարածաշրջանում»:

Այնուհետեւ վարչապետ Էրդողանը հիշեցրել է Իսրայելին Թուրքիայի ներկայացրած պահանջների մասին, ավելացնելով. «Եթե մեր պահանջներն արժանանան դրական արձագանքի, ապա մենք կվերագնահատենք իրավիճակը»: Երբ «Ալ Ջազիրայի» թղթակիցը ի գիտություն Էրդողանի ասել է, որ Իսրայելի արտգործնախարար Ավիգդոր Լիբերմանը որպես ամբարտավանություն է գնահատել Թուրքիայի պահանջները, վարչապետ Էրդողանը զայրացած բացականչել է. «Ամբարտավանն հենց ինքն է՝ ամբարտավանության գլուխգործոց: Նա փորձանք է Իսրայելի եւ իսրայելցիների գլխին: Իսրայելցիները պետք է ձերբազատվեն նրանից»:

Հ. ՉԱՔՐՅԱՆ

# «2011 թվական ենք մտել ֆինանսական որոշակի պաշարներով»

## *Վարչապետը 2011-ին բարեփոխումներ է խոստանում մի քանի ուղղություններով*

Վարչապետ Տիգրան Սարգսյանը երեկ՝ կառավարության այս տարվա առաջին նիստի ժամանակ նշեց, որ «2011 թվական մտել ենք որոշակի պաշարներով»։ Մասնավորապես, եկամտային մասով առկա է պետբյուջեի 25 միլիարդ դրամի գերակատարում, որից 20 միլիարդ դրամը միայն հարկային մուտքերի գծով է, իսկ ծախսային մասով՝ 15 միլիարդ դրամի տնտեսում։ «Միասնական հաշվի մնացորդը կազմում է 30 միլիարդ դրամ, իսկ կայունացման հիմնադրամի գումարները կազմում են 45 միլիարդ դրամ՝ ծրագրված 31 միլիարդի փոխարեն։ Սա պայմանավորված է առաջին հերթին այն հանգամանքով, որ կառավարության տրամադրած վարկերն ավելի շուտ են վերադարձվել կառավարությանը։ Կայունացման հիմնադրամում այս պահին ունենք 45 միլիարդ դրամ գումար», տեղեկացրեց վարչապետը, ավելացնելով, որ Համաշխարհային բանկի կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրված հերթական տրանշը՝ 25 մլն դոլար, նույնպես ավելացնելու է 2011-ի ֆինանսական պաշարները։

Նիստի ընթացքում Տիգրան Սարգսյանն անդրադարձավ նաեւ կառավարության 2011-ի առաջնահերթություններին։ Առաջինը նշվեց տնտեսական համակարգի դիվերսիֆիկացումը։ Այդ առումով վարչապետը կառավարության հիմնարար եւ լրջագույն բարեփոխում անվանեց կենսաթոշակային բարեփոխումը, որն առնչվում է բոլոր ոլորտներին։ Երկրորդը պարտադիր ապահովագրությունն է, որը սկսվեց 2010-ին, եւ «2011թ. այդ առումով բեկումնային է լինելու, որովհետեւ կձեւավորվեն պարտադիր ապահովագրության ինստիտուցիոնալ կառույցները»։

Բարեփոխումների երրորդ ուղղությունն, ըստ կառավարության ղեկավարի, առնչվում է բիզնես միջավայրին եւ իրականացվելու է հարկային եւ մաքսային վարչարարության ոլորտում։ Բարեփոխումներ են իրականացնելու նաեւ արդյունաբերության ու գյուղատնտեսության մեջ։ «Արդյունաբերությունում մենք առաջին անգամ ունենալու ենք արդյունաբերական արտահանման ուղղվածություն ունեցող համալիր ծրագիր։ Էկոնոմիկայի նախարարությունն աշխատել է այս ծրագրի վրա, եւ մենք պետք է կարողանանք հնարավորին չափ կարճ ժամանակահատվածում հաստատել այդ ծրագիրը։ Առաջին անգամ նկարագրված են լինելու ճյուղերն ըստ ձեռնարկությունների։ Ըստ ճյուղերի պետք է լինեն շարժիչ ուժ հանդիսացող ձեռնարկություններն իրենց ներուժով եւ նկարագրությամբ, թե 2011թ. արդյունաբերությունում աճի ինչպիսի տեմպեր են լինելու ըստ հատվածների», ասաց Տիգրան Սարգսյանը։

Բարեփոխումների հաջորդ հարթությունը պետության կողմից ծառայությունների մատուցման բնագավառներն են՝ առողջապահություն, կրթական համակարգ։ «Ծննդօգնության ծրագիրը ցույց տվեց, որ եթե մենք համալիր ծրագիր ենք իրականացնում, ապա ունենում ենք էական հաջողություն։ Միջազգային կառույցների գնահատականներով՝ ծննդաբերության բնագավառում 80 տոկոսով կոռուպցիոն ռիսկերը նվազեցին»։

2011-ին նախատեսվող վարչապետի մասնանշած բարեփոխումների մյուս հարթությունը դատաիրավական բարեփոխումներն են եւ ոստիկանության բնագավառում իրականացվող համալիր ծրագիրը։ «Լրջագույն ծրագիր ենք հաստատել՝ հստակ միջոցառումներով, ժամանակացույցով, ֆինանսական աղբյուրներով», հավաստիացրեց Տիգրան Սարգսյանը՝ որպես արդեն գրանցված դրական արդյունք նշելով ճանապարհատրանսպորտային պատահարների զոհերի թվի կտրուկ նվազումը մեկ տարվա ընթացքում։

Ա. Ս.

# «Տեսել եմ, թե ինչպես են հայերին պատշգամբներից ցած նետում»



1-ին էջից

«Սեւ հունվարի» ականատեսներից **Էլենորա Ավանեսովան** պատմում է, որ ժամանակ առ ժամանակ զանգվածային սպանություններ, ծեծեր լինում էին, սակայն հիմնական վայրագությունները տեղի ունեցան հունվարի 13-19-ին։ Հայերին փրկեց եղանակը. ադրբեջանահայերը համոզված են՝ եթե առաս ձյուն չգար, կշարունակեին հայերին զանգվածաբար սպանել։

«16-ամյա եղբորս առեւանգեցին, մի քանի ժամ անց զանգեցին ու հսկայական գումար պահանջեցին։ Ժամ առ ժամ գումարի չափն ավելանում էր։ Առավոտյան եղբորս դիակը գտանք Բաքվի զբոսայգիներից մեկում։ 16-ամյա պատանուն, որ կյանքում ոչ ոքի վնաս չէր պատճառել, հասցրել էին դանակի 7 հարված», ասում է Ավանեսովան։

«Բաքվեցի համերկրացիների միության նախագահ» Ռոբերտ Խաչատրյանը փաստում է, որ հայերի զանգվածային սպանդը Ադրբեջանի կառավարությունն էր կազմակերպել, մինչդեռ կային հասարակ ադրբեջանցիներ, ովքեր դեմ էին։

«Սեւ հունվարի» օրերին հայերի հեռախոսներն անջատված էին, մարդասպանները ցուցակ ունեին ու գիտեին, թե որոնք են հայերի բնակարանները», ասում է Խաչատրյանը։

«Սեւ հունվարի» սարսափի եւս մեկ ականատես **Սոնյա Կապտարովան** հիշում է, որ հունվարի 14-ին Բաքվի փողոցներում տանկեր կային, աղջիկներին ծեծում ու մեքենաներով տանում էին։ Թեպետ անցել է 21 տարի, սակայն Կապտարովան չի մոռացել տղամարդու՝ ատելությամբ ու զզվանքով լցված ձայնը, որ գոռում էր. «Մահ հայերին»։ «Տեսել եմ, թե ինչպես էին հայերին պատշգամբներից ցած նետում։ Դրսում սարսափելի ցուրտ էր, մի կերպ փախանք ու հասանք կայարան, որ գանք Երեւան։ Գնացքը ուշանում էր։ Գետնին նստած էին տարեց հայ կանայք՝ ոտաբոբիկ էին, ատամները ջարդված։ Նրանք վախից ու ցրտից դողացնում էին»։

Երկու ամսից լույս կտեսնի ադրբեջանահայերի ասամբլեայի նախագահ **Գրիգորի Այվազյանի** հեղինակած «Ադրբեջանցի թուրքերի նացիզմը։ Ադրբեջանահայերի ցեղասպանությունը. Հայացք ներսից» խորագրով գիրքը, որը կպատմի 1990-ին Ադրբեջանում իրականացված հայերի ջարդերի մասին։

«Գիրքը ներսի հայացքով է ներկայացնում հայկական ջարդերը եւ պատմում է ողջ ճշմարտությունը դրանց մասին», ասաց Այվազյանը՝ հավելելով, որ գիրքը կհրատարակվի ռուսերեն լեզվով. նախատեսվում է թարգմանել նաեւ անգլերեն եւ ադրբեջաներեն։

Բաքվի փախստականների խնդիրներով զբաղվող «Մեր տունը Հայաստանն է» կազմակերպության նախագահ **Նիկոլայ Բաբաջանյանը** պատմում է, որ «սեւ հունվարի» օրերին դաժանաբար սպանվել է 270 հայ, Ադրբեջանում կոտորածներից սպանված հայերի թիվը գերազանցում է 400-ը։

«Ինչու մարդասպանները մինչեւ օրս չեն պատժվում։ Ինչու մեր պետությունը չի պահանջում, որ բացվեն արխիվները, ուսումնասիրվեն փաստաթղթերը»։ Բաբաջանյանի ներկայացրած փաստերի համաձայն՝ Բաքվում հայերը թողել են 123.000 բնակարան, ադրբեջանցիները Երեւանում թողել են 32.000 բնակարան։

Թեպետ Բաքվի ջարդերից անցել է 21 տարի, սակայն փախստականների հարցերը դեռեւս լուծված չեն։ Նրանցից շատերը բնակարանի, աշխատանքի խնդիր ունեն, սակայն գլխավոր հարցը ազատ տեղաշարժման իրավունքն է։ Փախստականներից շատերը Հայաստանում ամուսնացել են, զավակներ ունեցել, սակայն նրանց անձնագրային խնդիրները լուծված չեն։ Ադրբեջանահայերից շատերը չեն կարողանում փոխել իրենց ազգանունները։ «Ազգանվան «յան» վերջավորության համար անհրաժեշտ են ծննդյան վկայական ու հսկայական գումար։ Ջարդերի ժամանակ շատերը չեն էլ հասցրել իրենց ունեցվածքը վերցնել, շատերի ծննդյան վկայականներն են կորել։ Եթե անգամ լիներ, շատերն ուղղակի հնարավորություն չունեն պատկառելի գումարը վճարելու, մինչդեռ Ադրբեջանում փախստականները նման խնդիր չունեն», ասաց Բաբաջանյանը։

ՎԱՇԻՆԳՏՈՆ

# Վախճանվել է ՀԲԸՄ-ի պատվավոր տնօրեն Բարրի Զորթյանը



Վաշինգտոնյան տարածքային հիվանդանոցում դեկտեմբերի 30-ին իր մահկանացուն է կնքել ՀԲԸՄ-ի երկարամյա ղեկավարներից Բարրի Զորթյանը, տեղեկացնում է ՀԲԸՄ-ի մամուլի գրասենյակից ստացված հաղորդագրությունը։

Զորթյանը ծնվել էր Քոթահիայում (Թուրքիա) 1920 թվականին։ Այնուհետեւ իր ընտանիքի հետ տեղափոխվել ԱՄՆ, որտեղ բնակություն էր հաստատել Նյու Հեյվնում (Կոնեկտիկուտ) եւ հաճախել Եյլի համալսարանը։ 1941-ին ավարտելով համալսարանը՝ ծառայել է ծովային կորպուսում Երկրորդ աշխարհամարտի տարիներին։ Ապա աշխատել է CBS Radio եւ Voice of America («Ամերիկայի ձայն») ռադիոկայաններում՝ որպես լրագրող եւ հաղորդումներ պատրաստել կորեական պատերազմի վերաբերյալ։ 1964-ին սկսում է վարել ԱՄՆ-ի համատեղ հասարակական գործերի գրասենյակը եւ մի տարի անց ստանում նախարարի դիվանագիտական աստիճան՝ ծառայելու համար որպես Հարավային Վիետնամում երեք դեսպանների լրատվական գրասենյակի խորհրդատու։ 1968-ին իր անձնական կարիերան է սկսում մասնավոր սեկտորում եւ 12 տարի աշխատում որպես Time Life Broadcast and Cable կաբելային հեռուստափռումների բաժնի վարիչ։

Հակառակ իր բազմազբաղ վիճակին՝ նա հավատավոր ու նվիրյալ անդամն է եղել ՀԲԸՄ-ի, որի տնօրենների վարչության անդամ է եղել 1970-ից։ Կինը՝ Մարգարետ Այլայան-Զորթյանը, մահացել էր 2010-ի հուլիսին։

«**Ազգը**» իր խորին ցավակցություններն է հայտնում հանգուցյալի հարազատներին՝ որդիներին, հարսին եւ 2 թոռնիկներին։

Հ. Ծ.

# Զորամասի նախկին հրամանատարը կալանավորվել է

**Այս մասին ասված է պաշտպանության նախարարության հաղորդագրության մեջ. «ՀՀ Տավուշի մարզի N զորամասի նախկին հրամանատար Սերգեյ Կարապետյանի եւ մի խումբ քաղաքացիների միջեւ 2010թ. դեկտեմբերի 31-ին տեղի ունեցած միջադեպի կապակցությամբ Սերգեյ Կարապետյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 258 հոդվածի 4-րդ մասով, 34-104 հոդվածի 2-րդ մասի 1-ին, 6-րդ եւ 10-րդ կետերով, 133 հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 3-րդ եւ 6-րդ կետերով, 3-րդ մասի 2-րդ կետով։ Սերգեյ Կարապետյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը։ ՀՀ պաշտպանության նախարարությունը խորապես ցավակցում է միջադեպի հետեւանքով մահացած Տարոն Ենգիբարյանի հարազատներին»։**

# Ուղղում

«Ազգ»-ի երեկվա համարում Երվանդ Ազատյանի ստորագրած «Բարկությունը քաղաքականություն չէ» հոդվածում սպրդել է տպագրական սխալ.- «Հիշեցնելու համար երկրի **հիմնարար հայերի** փայփայած արժեքները» նախադասության ընդգծված բառերը պետք է կարդալ՝ **հիմնադիր հայրեր,** իսկ «Մեր մյուս **համառոտ** սյունակագիրը» նախադասության ընդգծված բառը՝ **հմուտ:** Ներողություն ենք խնդրում սխալների համար։

# Կոզեռնի բնակիչների բողոքի ցույցը

**Կառավարության շենքի մոտ երեկ բողոքի ցույց էին անցկացնում արդեն 8-րդ տարին Երեւանի իրացման գոտի համարվող Կոզեռն թաղամասի բնակիչները։ «Պահանջում ենք արդար փոխհատուցում», «Կոզեռնը միասնական է» եւ այլ կարգախոսներով 100-150 բնակիչներ իրենց դժգոհությունն էին հայտնում նախօրեին գնահատող կազմակերպության արած փոխհատուցման գնային առաջարկից։ Բնակիչները արդար փոխհատուցում ստանալու իրենց պահանջը հայտնեցին կառավարության նիստից դուրս եկող քաղաքապետ Կարեն Կարապետյանին, որը խոստացավ զբաղվել այդ հարցով։**

# Կապանում կհատվեն 50 հազար ծառեր

**Երեկ «Օրհուս» կենտրոնում բնապահպանների եւ կապանցիների մասնակցությամբ տեղի է ունեցել քննարկում, որտեղ մասնակիցները մտահոգություն են հայտնել Շահումյան հանքավայրի բաց շահագործման կապակցությամբ։ Խնդիրն այն է, որ հանքավայրի շահագործման նպատակով Կապան քաղաքի հարեւանությամբ կվերացվեն եւս մեկ անտառ, տասնյակ հազարավոր ծառեր։ Քննարկման ժամանակ բազմաթիվ կապանցիները դժգոհություն են հայտնել՝ հավելելով, որ Սյունիքում շատերն են դեմ հանքի շահագործմանն ու անտառի հատմանը։**

**Խնդիրը գտնվում է «Ազգի» ուշադրության կենտրոնում, եւ հաջորդիվ կներկայացնենք առավել մանրամասն տեղեկություն։ Հ. Հ.**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի։
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում։
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում։

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

ԱԶԳ

# Անցուդարձ

Հայաստանում հնագիտական բացահայտումների մի այնպիսի բում է մեր օրերում, որ խելացի եւ նպատակային օգտագործելով դրանց արդյունքները՝ հայերս կարող ենք երկար ճառերի ու անօգուտ բանավեճերի փոխարեն հնագիտական անգին նյութն օգտագործել հայկական ինքնության դեմ հարձակումներին ի պատասխան: Այդ առումով, օրինակ, Արենիի քարանձավի շուրջը ստեղծված աշխուժությունն իր գործն անում է. ավելի վաղ հայտնագործված քարանձավի հազվագյուտ գտածոների պարբերական հայտնագործումն ու նկարագրությունը անընդհատ աշխարհը սնում են գիտական այնպիսի խոսուն փաստերով, որ դրանց դեմ չի կարող առարկել եւ ոչ մի կեղծարար, ու այստեղ դեր ունի նաեւ այն, որ հնագիտական արշավախումբը արտերկրի մասնագետներով եւս հագեցած է: 2007-ից ի վեր աշխարհի մակարդակով Արենիի մասին ինչ ասես իմացվել է՝ էլ 5500-ամյա կոշիկ, էլ նույն տարիքի գույները պահպանած գործվածք, հյուսվածքները պահպանած այծ: Հիմա էլ միջազգային լրատվամիջոցները պատմում են, որ Արենիում 6000-ամյա գինեգործարան է հայտնաբերվել՝ մինչեւ հիմա հայտնաբերվածներից ամենահինը, ինչը Փենսիլվանիայի համալսարանի թանգարանի կենսամոլեկուլյար հնագիտության փորձարանի տնօրեն **Պատրիկ Մաքհովերին** ենթադրել է տալիս, որ գինու մշակույթն ու եվրասիական խաղողի տարածումը սկսվել են այժմյան Հայաստանից եւ նրան հարակից լեռնային շրջաններից: Ահա այսպիսի գիտական գնահատականների դեմ անզոր են հայերի պատմությունն ու անցյալը յուրացնելուն եւ պատմությունը կեղծելուն զինվորագրված մեր մոտակա հարեւանների ջանքերը:

Մեր ասածն այն է, որ Արենին բոլորովին էլ եզակի վկայարան չէ Հայաստանի տարածքում գոյություն ունեցած կազմակերպված հանրույթների մասին, եւ հնագիտական արշավախմբերի նպատակային ֆինանսավորման եւ կազմավորման, պետական կառույցների՝ այս ուղղությամբ նպատակաուղղված գործողությունների պարագայում շատ դեպքերում մենք ինքնին կարող ենք ստանալ մեր թշնամիների կողմից միջազգային ասպարեզում հրահրված շատ արհեստական բանավեճերի պատասխան- հերքումը՝ անվիճելի հնագիտական գտածոներով եւ դրանց գիտական արժեւորման տեսքով:

Ահա այդպիսի մի հնարավորություն կլիներ նաեւ Երեւան քաղաքի հյուսիս- արեւելքում Ավան եւ Ավան-Առինջ թաղամասերի շուրջը պարփակված Արտաշեսյանների շրջանի քաղաքատիպ բնակավայրի հնավայրի լիարժեք հետազոտումը, որի մեծ մասն այժմ, իհարկե, նոր կառուցապատումների տակ է, թեեւ տարածքն արգելոց է եղել: Տիգրան Մեծի ժամանակների քաղաքի մնացորդները եւ հարակից հնավայրի մի փոքրիկ հատված պեղելով միայն հնագետ **Արա Դեմիրխանյանի** ղեկավարած արշավախումբը ժամանակին մոտ 5 հազար հնագիտական նմուշ էր հայտնաբերել, եւ այդ հնավայրը մի անգին գանձ է հենց Երեւանի համար, քանի որ կարող է դառնալ Երեւանի անձնագիրը: Դեմիրխանյանը երկար տարիներ ուսումնասիրելով տարածքի՝ ժամանակագրական առումով երեք խումբ հուշարձանները՝ 250-ից ավելի գունավոր ներդիրներով մենագրություն էր պատրաստել. երեք պատմական ժամանակաշրջան արտացոլող հուշարձանախմբի մի մասը Տիգրան Մեծի ժամանակաշրջանի զարգացած մշակույթով քաղաքի մնացորդներին է վերաբերում, որոնք հայոց հնագույն պատմության եւ միջնադարյան ժամանակների միջեւ ընկած 200 եւ ավելի տարվա պատմությունն են լրացնում, իսկ կոնկրետ անտիկ քաղաքի հուշարձանից 1000-ից ավելի առարկաներ են հայտնաբերվել:

Հնագետի՝ Երեւան քաղաքի պատմության այդ ժամանակի վերաբերյալ ուսումնասիրությունը տվյալ բնակավայրի հնագիտական նյութի միջոցով հասարակությանը եւ մասնագետներին անցած տարեվերջին գրքի տեսքով հասցրեց Երեւանի քաղաքապետարանը՝ հովանավորելով Դեմիրխանյանի տարիների աշխատանք «Երեւան քաղաքի հյուսիս-արեւելքը Արտաշեսյանների դարաշրջանում» մենագրության տպագրությունը բազմաթիվ ներդիրներով, ճիշտ է՝ ոչ բոլորը գունավոր, բայց խիստ հետաքրքրական, ու հատկապես հնագիտության ոլորտ նոր ոտք դնողի եւ ընդհանրապես ուսումնասիրողների համար՝ դասագրքային նշանակությամբ: Եթե քաղաքապետարանը շարունակեր սկսած գործն ու Արա Դեմիրխանյանի առաջարկներին անսալով՝ մի փոքրիկ թանգարան կազմակերպեր հնավայրին հարակից որեւէ տարածքում, որը կարող էր դառնալ ուրարտական քաղաքի, եւ ինչու չէ, նույն տարածքի ավելի վաղ եւ ավելի ուշ ժամանակի մասին պատմող նյութերի մի զետեղարան, հասցեագրված հատկապես ուրարտական պատմությունը կեղծող մեր հարեւաններին եւ այլ կեղծարարների, սա կարելի կլիներ մայրաքաղաքի ղեկավարների՝ ճիշտ հիմքի վրա դրված գործի ճիշտ շարունակության համարել, քաղաքի անձնագիրը դրսին եւ ներսին մատուցելու խելացի եւ շնորհակալ գործ: Միայն մի օրինակով հիշեցնենք, որ հենց վերջերս թուրքերը Վան-Տոսպի պատմությունը կեղծող բուկլետներ էին հրապարակել եւ Աղթամարի Ս. Խաչի պատարագի օրերին բաժանում էին զբոսաշրջիկներին՝ Տոսպի ուրարտական պատմությունը վերագրելով եզդիներին եւ այլ ազգերի, մինչդեռ աշխարհին ներկայացված եւ գիտական շրջանակների կողմից ընդունված հնագիտական նյութը ուրարտական քաղաքի մասին, Երեւանի տարածքում, նույն այդ կեղծարարներին կարող է ծիծաղելի դարձնել աշխարհի աչքում:

## Երեւանի պատմության անհրաժեշտ լրացում




Վերադառնալով երկլեզու՝ ռուսերեն եւ հայերեն ամփոփում ունեցող «Երեւան քաղաքի հյուսիս-արեւելքը Արտաշեսյանների դարաշրջանում» գրքին՝ մենագրության առիթով հնագետի երջանկությունը հասցնենք հասարակությանը՝ մի փոքր մատուցելով մենագրության նյութը:

Ավանի եւ նրան հարող Առինջի բնակավայրը բացառիկ է իր պատմության եւ մշակույթի շարունակականությամբ՝ սկսած վաղ բրոնզի դարաշրջանից (մ.թ.ա 4-3-րդ հազարամյակների սահմանագլխից)՝ մինչեւ անտիկ ժամանակաշրջան եւ միջնադար: Ավանի հելլենիստական շրջանի հնավայրը սկզբնապես ոչ մեծ չափի բլուր էր, տեղանքն ուներ նպաստավոր աշխարհագրական դիրք՝ բնականից պաշտպանված այլ բլուրներով եւ աշխուժանալով Գետառի բարեբեր հովտի ջրերով, երկրագործներին եւ անասնապահներին գրավելով բնական պաշարների առատությամբ: Ավանի որակյալ կավն էլ խթանել է խեցեգործության զարգացումը: Բնակավայրը տարանցիկ առեւտրի մայրուղուն մոտ է գտնվել, մայրուղին էլ ավելի մեծ առեւտրաշահ կենտրոնների է կապվել Հայաստանում եւ նրա տարածքից դուրս, այնպես որ այստեղ վաղ ժամանակներից բզզացել է կյանքը: Պեղումներից գտնված իրերը խոսուն վկաներն են գրեթե երեք դար՝ մ. թ. ա. 2-1-ին դարերում գոյատեւած աշխույժ, առեւտրաշահ, ծաղկած մշակույթ եւ ավելի շատ քաղաքային կենցաղ ունեցող բնակավայրի: Պեղումներն ի հայտ են բերել անմիջական բնակարանների մոտ կառուցված թաղումներ՝ կարասների մեջ (դիադրում), դամբարաններում գտնվել են դրամներ, հոգեւոր մշակույթի նմուշներ: Շատ գտածոներ արժեքավոր են նրանով, որ արտացոլում են տեղական հավատալիքներն ու ծեսերը: Դրանք եւ բնական քարերից ու ապակուց պատրաստված զարդարանքներ են, եւ պերճանքի առարկաներ, եւ ծիսական իրեր, եւ կենցաղային օգտագործման առարկաներ, եւ գործիքներ, ընդ որում՝ ճաշակով եւ ժամանակի մշակութային ընկալմամբ ձեւավորված: Դրանց պատկերները կգտնեք 500 օրինակով լույս տեսած գրքում, ով գիտե՝ գուցե մոտ ապագայում այդ հիմքով ձեւավորված թանգարանում:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

## Պետեկամուտների կոմիտեն հայտնաբերել է ապօրինություններ

Մասնավորապես Մասիսի Նորաբաց գյուղում հայտնաբերվել է փափուկ կահույքի եւ ճաշասեղանների արտադրությամբ զբաղվող արտադրամաս՝ առանց պետական գրանցման: Ապօրինի ձեռնարկատերը նույն գյուղի բնակիչ Ս. Անտոնյանն էր:

ՀՀ ՊԵԿ օպերատիվ-հետախուզական միջոցառումներով բացահայտվել է նաեւ Ջրվեժում գործող արծաթյա զարդերի արտադրությամբ զբաղվող ապօրինի արտադրամաս: Հարկային դաշտից դուրս գործունեություն այս պարագայում ծավալում էր Ա. Խաչատրյանը. արտադրամասի գործունեությունը դադարեցված է, ստուգվում է պետությանը հասցված վնասի չափը:

Քանաքեռ-Զեյթուն համայնքում բացահայտվել է, որ Ուլնեցի փողոցում գտնվող Խորհրդայինի հարկային տեսչությունում հաշվառված «Նիկոլ Գալանտերյանի անվան բեմարվեստի մանկավարժական համալսարան» ՍՊԸ-ն 2005-ին, պետական գրանցում ստանալուց հետո չի ներկայացել հարկային մարմիններին եւ հետեւաբար չի ստացել համապատասխան լիցենզիա: Ընդ որում՝ ռեկտոր Արմեն Նալբանդյանը հայտնել է, որ հաշվետվություն չներկայացնելը «անփութությունից է», իսկ լիցենզավորում չի անցել, քանի որ «պայմաններին համաձայն չէ եւ առաջիկայում էլ չի պատրաստվում անցնել»: Պետությանը հասցված վնասի չափը կարձանագրվի ստուգմամբ:

Կոտայքի մարզի Գառնի գյուղում եւս ՊԵԿ օպերատիվ հետախուզական վարչության աշխատակիցները արձանագրել են ապօրինի գործունեության դեպք. այն իրականացրել է Կ. Մկրտչյանը, որն առանց պետական գրանցման զբաղված է եղել մանրածախ առեւտրով: Հ. Ա.

### ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԻ ԵՐԿՈՒ ՀԱՅԱՑՔ

## Պետք է դիմակայել Չավուշօղլու-Դավութօղլու զույգին

ԵԽԽՎ մարդու իրավունքների հանձնակատար Թոմաս Համմարբերգը հունվարի 18-ին այցելելու է Հայաստան եւ ամենայն հավանականությամբ կհանդիպի խորհրդարանական եւ արտախորհրդարանական քաղաքական ուժերի հետ, հանդիպումների օրակարգում կլինեն ԵԽԽՎ վերջին բանաձեւերի կատարումները, մարտի 1-ի հետեւանքների վերացումը եւ այլն: Երեկ լրագրողներին հանդիպած ԱԺ եվրոինտեգրման հանձնաժողովի նախագահ **Նաիրա Զոհրաբյանը** իրազեկված չէր հանձնակատարի օրակարգից, բայց ենթադրում էր, որ բազմաթիվ մտահոգություններ արձանագրած ԵԽԽՎ բանաձեւերի հետ է հենց կապվելու այդ օրակարգը: Հունվարի վերջին ԵԽԽՎ նստաշրջանում Հայաստանին վերաբերող հարց չկա, բայց քանի որ նախարարների կոմիտեն ղեկավարում է Ահմեդ Դավութօղլուն, իսկ ԵԽԽՎ նախագահը Մեվլութ Չավուշօղլուն է, եւ այդ տանդեմն ամեն կերպ սպասարկելու է թուրք-ադրբեջանական լոբբին, հայկական պատվիրակությունը պետք է պատրաստ լինի դիմագրավելու ամեն անակնկալի, մանավանդ հունվարյան նստաշրջանում ելույթ ունեն ե՛ւ Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլը, ե՛ւ Դավութօղլուն: Ն. Զոհրաբյանը նրանց ելույթների ժամանակ հանդես է գալու հարցադրումներով: Չի բացառվում, որ Դավութօղլու-Չավուշօղլու զույգը հունվարյան նստաշրջանում փորձի իրականություն դարձնել ԼՂՀ հարցով ենթահանձնաժողովի ստեղծումը: Կոնկրետ Ն. Զոհրաբյանը հերթագրվել է երեք ելույթի համար՝ փախստականների եւ միգրացիայի վերաբերյալ հարցերի քննարկման ժամանակ, որտեղ խոսք կգնա ԼՂՀ-ի մասին: Իսկ եթե ԼՂ հարցով ենթահանձնաժողովը փորձեն վերակենդանացնել, ապա հայկական պատվիրակությունն, ըստ Ն. Զոհրաբյանի, պետք է բոյկոտի դա:

## Հայաստանի պարտքային բեռը մեծ չէ՝ ըստ Գագիկ Մինասյանի

ԱԺ ֆինանսավարկային եւ բյուջետային հանձնաժողովի նախագահ **Գագիկ Մինասյանը** երեկ լրագրողների հետ հանդիպման ժամանակ կարծիք հայտնեց, թե 2010 Հայաստանի համար բնութագրվեց որպես հետճգնաժամային տարի, եւ այժմ մեր երկիրը մտնում է տնտեսության կայուն զարգացման փուլ: Նախորդ տարվա մեջ ֆինանսավորվել են համակարգաստեղծ ոլորտները, այժմ մեր տնտեսությունը լավ արդյունքներ ունի՝ վերականգնվել են հանքային եւ շինանյութերի արդյունաբերությունը, վերամշակող ձեռնարկությունները: Արտահանման աճը, ըստ Գ. Մինասյանի, եւս անցնող տարվա ձեռքբերումներից է՝ 2009-ի 17 տոկոսից 2010-ին դարձել է 21 տոկոս: Գործարկվեց Երեւանի ՋԷԿ-ը, որի շնորհիվ էլեկտրաէներգիայի գները չթանկացան: Իսկ միջազգային շուկայում ընդունված գներով գազի սպառման հետ Գ. Մինասյանը խորհուրդ է տալիս հաշտվել: Անցած տարվա բացասական միտումները՝ գների աճի բարձր ցուցիչ, գյուղարտադրանքի ծավալի նվազում, հանձնաժողովի նախագահը պայմանավորեց միջազգային գնաճով եւ վատ եղանակով: Գ. Մինասյանն իր ասուլիսներին սիրում է խոսել այն մասին, որ մեր արտաքին պարտքը նվազ կամ միջին պարտքային բեռ ունեցող երկրների նկատմամբ սահմանված շրջագծում է՝ 3,8 մլրդ դոլար, կամ ՀՆԱ-ի 42 տոկոսը, սա, ըստ նրա մեծ պարտքային բեռ չէ, մանավանդ որ արդեն միջոցառումներ են պլանավորված այդ բեռը նվազեցնելու համար: Իսկ ՀԲ վերջին՝ Հայաստանին հատկացված 25 մլն վարկը ուղղվելու է այն ոլորտի ֆինանսավորմանը, որը դրա կարիքն ունի, մի խոսքով՝ բյուջեում է տեղաբաշխվելու:

Մ. Խ.

## Հաշվառումից ժամանակավորապես հանվել է տրանսպորտային 8792 միջոց




Երեկ «Արցախ» ակումբում լրագրողների հետ հանդիպեց ճանապարհային ոստիկանության հաշվառման քննական բաժնի պետ **Արթուր Տոնոյանը**: Տրանսպորտային միջոցները ճանապարհային ոստիկանությունում հաշվառումից ժամանակավոր հանելու համար, ըստ Արթուր Տոնոյանի, տրանսպորտային միջոցի սեփականատերը ճանապարհային ոստիկանության հաշվառման ստորաբաժանում կարող է ներկայացնել դիմում, անձնագիր կամ անձը հաստատող փաստաթուղթ, տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագիրը եւ տրանսպորտային միջոցի համարանիշները: Վերոնշյալ գործընթացը ճանապարհային ոստիկանությունում իրականացվում է անվճար: Բանախոսի փոխանցմամբ՝ 2010-ի հոկտեմբերի 16-ից մինչեւ երեկ ճանապարհային ոստիկանությունում հաշվառումից ժամանակավորապես հանվել է տրանսպորտային 8792 միջոց:

«Ազգի» հարցին՝ եթե վթար է լինում, եւ ճանապարհին առաջանում է խցանում, խախտվում է երթեւեկության նորմալ ընթացքը, այդ դեպքում, երբ վթարի ենթարկված մեքենաներն ունեն պարտադիր ապահովագրում, ինչպե՞ս է վարվելու ճանապարհային ոստիկանությունը, Արթուր Տոնոյանը պատասխանեց. «Եթե կողմերը (վարորդները) պահանջում են վարչական վարույթ, ապա ճանապարհային ոստիկանությունն իրականացնում է դա, իսկ եթե փողոցում խցանում է լինում, ապա կիրառում ենք արդեն նախազգուշացնող միջոցառումներ»:

Ի. Պ.

# Ազգային

### Երկու սփյուռքահայեր

Անցնող տարվա նախավերջին օրը «Եվրոպա» հյուրանոցի նախասրահում պայմանավորված էի ԱՄՆ-ից բարեգործական հերթական ծրագրով Երեւանում գտնվող Լյուսին Մարտիրոսյան-Հարվինի հետ: Հարմարության համար նույն վայրում հանդիպեցի նաեւ Շահեն Խաչատրյանին` Ժան Տեր-Մերկերյանի վերջերս թողարկած CD-ներն իրենից ստանալու: Ամերիկահայ տիկնոջը նոր-նոր էի ծանոթանում եւ այնպես ստացվեց, որ չներկայացրի նրանց միմյանց: Հյուրանոցից դուրս գալիս Շահենը հետ շրջվեց ու մոտեցավ նրան, ես ունկնդիր եղա ճիշտ նույն բնույթի այն խոսակցությանը, որ կարդացել, բայց չեմ հիշում ում գրքում, ծավալվում է երկու իրար անծանոթ սփյուռքահայերի միջեւ` աշխարհի որեւէ կետում, թերեւս, ավելի շատ օդակայաններում: Առանց նախաբանի վաղեմի մտերիմների պես ծայր է առնում այս երկխոսությունը.

«Ես Հալեպեն եմ, բայց հոս կապրիմ», «Ես ալ Պոլսեն, ծնողքս Խարբերդեն են, հոն ծնած եմ, այժմ Ամերիկա կապրիմ», «Մերոնք ալ Էրզրումեն են: Սա ձեզ` մեծ ջութակահար է», Շահենը տիկնոջն է մեկնում Ժան Տեր-Մերկերյանի CD-ն: «Ներող եղեք, շուտով կմեկնիմ, ձեզի բան մը չունիմ տալու»: «Հոգ չէ, ես կսիրեմ բաժնել»: «Ես ալ անանկ եմ», մեղմաբար ժպտում է տիկինը: Մի քանի ժամից նրանք երկուսն էլ նույն ինքնաթիռով կմեկնեն Փարիզ, հետո տարբեր ուղղություններ կբռնեն...

# Բարեսիրությունը` ներքին էություն


Հեծանիվները պատրաստ են բեռնափոխադրվելու ( Օռլանդո)


«Մեղեդի» մանկական առողջարանում (Դիլիջան )

### Եկեղեցին որպես խարիսխ ու կամուրջ

Խարբերդում, ուր ծնվել է Լյուսին Մարտիրոսյան-Հարվին, ազգային-եկեղեցական ավանդույթները խոր արմատներ ունեին, եւ բարեգործությունը կյանքի անքակտելի մաս էր: «Ամեն մարդ հոգ կտաներ աղքատներուն: Պոլիս նույն բանն էր: Ամեն եկեղեցի իր աղքատախնամ ճյուղն ուներ. պիտի դրամ տայինք, որ իրենք աղքատներուն օգնեին: Վարժված էինք, նորություն չէ մեզի համար»:

Վաղուց հեռացել է տիկին Լյուսին Պոլսից, բնակություն հաստատել Միացյալ Նահանգներում` 52 տարի արդեն: Այժմ ապրում է Օռլանդո քաղաքում, երկար տարիներ աշխատել է տեքստիլ արտադրության մեջ` որպես օֆիս-մենեջեր: Արդեն վաղուց չի աշխատում, հանրային աշխատանքներով է զբաղվում:

Զուր չէր Վահան Թեքեյանը ասում. «Եկեղեցին հայկական ծննդավայրն է հոգվույս»: Ուր գնաց տարագիր հայը, նախեւառաջ եկեղեցի փնտրեց` հոգու հայրենիքը. փնտրեց, գտավ ու կառուցեց, համախմբվեց շուրջը: Օռլանդոյում հայերը շատ չեն, հայերի փոքրաթիվ մի խումբ, նրանց հետ Լյուսին, իր մայրն ու ամուսինը, ներկայիս Երուսաղեմի հայոց պատրիարք Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանի հետ եկեղեցի կազմեցին. շենքի կառուցումը երկար ժամանակ առավ` 26 տարի, եւ միայն այս ամռանը բացվեց Օռլանդոյի Սբ Հարություն հայկական եկեղեցին` Թուֆայան ընտանիքի ֆինանսական աջակցությամբ` անվանակոչված ի հիշատակ բարերարի հոր: Օռլանդոյում ապրող շուրջ 330 հայ ընտանիքները մշտապես այցելում ու մասնակցում են եկեղեցական արարողություններին, շատերն ընդգրկված եւ մասնակից են բարեգործական տարբեր ծրագրերի: Տիկին Լյուսին հոգաբարձուների խորհրդի առաջին անդամներից էր, նաեւ քարտուղարը, ապա ատենապետ եւ գանձապահը, այժմ միայն գանձապահն է: Եկեղեցին հիմնելուց ու կառուցելուց հետո այն պահպանելն է կարեւոր. սակավահայ քաղաքներում ոչ այնքան հեշտ գործ. նվիրատուներն ու այցելությունները քիչ են: Հարկ է բազմազան աշխատանքներ տանել, տարբեր ծրագրեր մտահղանալ` եկեղեցին պահել կարողանալու համար:

1971-ին Լյուսին Մարտիրոսյանը առաջին անգամ Հայաստան այցելեց. այդ տարիներին կամուրջը հայրենիքի հետ Ս. Էջմիածինն էր: Հաջորդ այցի համար ավելի քան քսան տարի պահանջվեց: 1992-ին, եկեղեցու հայրերից մեկի եւ քոլեջի հայ երեխաների հետ 5 շաբաթ հյուրընկալվեցին Սեւանի հոգեւոր դպրանոցում: Երկու տարի անց` 94-ին եւ ապա 95-ին, «Հավաս» հանձնախմբի անդամների եւ Տեր Վրթանես քահանա Գալայջյանի ղեկավարությամբ այցելեց Դիլիջանի «Մեղեդի» մանկատուն, մոտից տեղեկացավ երեխաների կարիքներին, այստեղ էլ ծանոթացավ Աբրահամ եպիսկոպոս Մկրտչյանի հետ: Մինչ այդ Օռլանդոյի հայերը, իհարկե, սփյուռքահայ բոլոր համայնքների պես, հնարավորին չափ օգնություն էին հասցրել Սպիտակի երկրաշարժի աղետյալներին:

Երբ ֆինանսական դժվարությունների առաջ կանգնած «Հավասը» կասեցրեց աշխատանքները, տիկին Լյուսին փնտրեց ու ուրիշ գործընկերներ գտավ, կապը Հայաստանի հետ չկտրվեց եւ մինչեւ 2007 թվականը, ամեն տարի պարբերաբար այցելեց Հայաստան, անհրաժեշտ օգնություններ հասցնելով տարբեր կազմակերպությունների` հոգ տանելով Դիլիջանի մանկատան ու գիշերօթիկի, Երեւանի Նորք-Մարաշի մանկատան, Եղեգնաձորի ամառային ճամբարի շուրջ 500 երեխաների հագուստի, ուսումնա-գրենական պարագաների եւ այլ կարիքների: Ստանձնել եւ իրականացվել է մանկատան մասնաշենքերից մեկի հիմնավոր վերանորոգությունը: Այցելություններ եւ օգնություններ եղել են նաեւ Քելբաջարի զորամասին, Վանաձորի ծերանոցին, Ստեփանավանի կարիքավորներին: Այս տարի եւս մեկ օջախ նրանց բարեխնամ աջակցությունը ստացավ. ամերիկահայ մանկավարժ-մեթոդիստ Սիլվա Տեր-Ստեփանյանի անմիջական նախաձեռնությամբ Օշականի եկեղեցուն կից գործող Խրիմյան կրթարանի տարեվերջյան ձեռնարկի առիթով տիկին Լյուսին անհրաժեշտ տաքացուցիչներ, գրասեղաններ եւ այլ պարագաներ նվիրեց:

Օռլանդոյում էլ Լյուսին Մարտիրոսյանը միշտ կապված է եղել երեխաների հետ` շուրջ 6 տարի հայերեն դասընթացներ է անցկացրել նրանց հետո` վայելելով հայրենանվեր մեր մյուս հայրենակցուհի, նյույորքցի Սիլվա Տեր-Ստեփանյանի աջակցությունը:

«Իրականության մեջ հայերեն դպրոց չեմ տեսած: Խարբերդ ծնած եմ, ուր հայկական դպրոց չկար: Բայց մայրիկս տունին մեջ սորվեցուցած էր: Սիլվայի գիրքերով եւ իմ իմացածով որոշեցի ամերիկացի հայ երեխաներուն փոխանցել գիտցածս, մտածեցի` ոչինչեն լավ է»:

### «... բայց պիտի գիտնան, որ տվածնին տեղ կհասնի»

Ճշմարիտ բարեգործությունը ճանաչող, խոնարհաբար գործող հավատավոր մարդու պես է խոսում տիկին Լյուսին` մեղմաբար, ցած ձայնով. «Ես կազմակերպողն եմ, անունս մեջը չըլլա, շատ գոհ կմնամ: Աստված գիտե սիրտս», ասում է նա, հետո պատմում տեղում կատարվող բազմաբնույթ աշխատանքների մասին: Օռլանդոյի իր տան առաջ կուտակված հեծանիվների մի «բազմություն» դեռ սպասում է Հայաստան ուղարկվելու: Առաջացած տարիքում արդեն այս եւ նման աշխատանքների կազմակերպումը, ճամփորդելը, հանդիպումները այդքան էլ հեշտ չեն:

Իր համոզմունքները խորն են արմատավորված եւ որպեսզի դրանց չդիպչեմ, շատ զգուշորեն փորձում եմ ընդամենը ասել, որ Հայաստանում հատկապես, բնակչությունը լավ է, որ տեղյակ լինի այսպիսի մարդկանց եւ նրանց գործերի մասին, որպեսզի հավատն առ գթասրտությունն ու կարեկցանքը չսառչի իսպառ:

«Երբ առաջին անգամները կուգայի սրբազանին, ինքը երեխաներեն ավելի կուրախանար: Կըսեր` Լյուսին, ոչ մի բան ալ չբերես, միայն գալը, ասոնց այցելելը իրենց համար մեծ բան է: Իրենց մասին մեկը կմտածե ըսելով, կուրախանան»:

Ամեն տարի կըսեմ` ալ չեմ գար, աս վերջին այցս է. 70 տարեկան եղա: Բայց նորեն Դիլիջան գացի, արդեն առաջին օրը, որ այդ երեխաներուն երեսը տեսա, բան մը չտված, անոնց ուրախությունը տեսա, մտածեցի` այս վերջը չէ. այնքան որ կարողացա, պիտի երթամ, ի՞նչ ընեմ: Երեխաներու կոշիկները ես կբաժնեմ, մեկ ուրիշը հագուստը կբաժնե: Տղա մը եկավ, գուլպան ամբողջ ջուրերու մեջ, երբ կոշիկը հանեց, տակը ամբողջ ծակ էր, սա տեսնեմ եւ ինչպե՞ս չգամ:

Երեւան չեմ կենար բնավ, մեկ օր, երկու օր: Ան ալ շուկաներն էի ամբողջ ժամանակը` երեխաներուն անհրաժեշտ իրերը կգնեի: Երեւան եթե պիտի մնամ, մեյ մըն ալ չեմ գար: Տեսա, շատ աղվոր է, քաղաքը զարգացեր է, ամեն ինչը կա, լույսերը` fine, ալ չեմ գար, ինչ պիտի ընեմ, բայց երբ կերթաս այնտեղերը (ուզում է ասել` շրջանները) կտեսնաս...

Երիտասարդ աղջիկ մը Երեւանեն ինձի ըսավ. «Տիկին Լյուսին, Հայաստան այդքան աղքատ կա՞»: «Հաջորդ անգամ քեզի կզանգեմ, հետս եկուր Դիլիջան», ըսի իրեն: Դիլիջան դեռ վատ չէ, ներքեւի կողմերը ավելի վատ են:

Բարեսիրտ մարդիկ շատ կան, բայց պիտի գիտնան, որ տված փողերնին տեղ կհասնի: Մերինը հարյուր տոկոսով երեխաներուն կհասնի. ամեն մարդ հավատք ունի, որ եթե փողը տա, տեղ կհասնի»:

Բարեկամների պակաս չունեն տիկին Լյուսին եւ իր գործընկերները, ամեն տեղ աջակիցներ կան` օտար եկեղեցիներից սկսած մինչեւ Ավստրալիայից օգնություններ լինում են. ծննդյան տարդարձի կամ անգամ մահվան առիթով ոմանք ծաղկեպսակի փոխարեն դրամ են փոխանցում` կարիքավոր երեխաներին ուղարկելու:

Օռլանդոյից ինքնաթիռը մինչեւ Փարիզ կայանում է մեկ այլ վայրում եւս. «Նստեր, կսպասեմ թռիչքին, պատմում է ճերմակահեր, բարեմիտ այս ամերիկահայուհին, տեղ չկար, պայուսակս վար դրի, կին մը եկավ քովս նստեցավ, բարեւ տվինք, զրույց սկսավ. «Ո՞ւր կերթաս», ըսավ: «Հոն կերթամ»: «Օ՜, Փարիզ»: «Չէ, ըսի, այնտեղեն Հայաստան կերթամ»: «Ի՞նչ պիտի ընես»: Ըսի ընելիքս: «Օ՜, որքան կուզեմ անանկ բան մը ալ ես ընեմ»: 100 դոլարի չեք գրեց, ինձի տվավ, օտար կին, չեմ ճանչնար: Բարեսիրտ են, միայն իմանան, որ փողը որոշված տեղը պիտի երթա: Կինը տեսավ, որ ձեռքիս ահագին բան կկրեի...

Նույնիսկ թուրք կին մը դրամ տված է հոստեղի երեխաներու համար, երկու անգամ` հարյուրական դոլար: Ես Աստծո կհավատամ եւ հրաշքներու ալ կհավատամ... Այդ կինը ուրիշ տեղ կրնար նստիլ եւ ոչ թե քովս»:

Մենք բաժանվում ենք փոխադարձ ընկալման բարեկամությամբ: Լյուսին Մարտիրոսյան-Հարվին նորից կգա Հայաստան:

Դիլիջանից երկու պատանի նրան տեսնելու համար Երեւան էին եկել: Երկար զրույց ունեցավ նրանց հետ հյուրանոցի նախասրահում:

**ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ**



## Հայրենադարձությունը AGBU հանդեսում

**Տարեմուտին մի քանի օր մնացած «Ազգ»-ը ստացավ ՀԲԸՄիության AGBU անգլիալեզու հանդեսի վերջին` 2010-ի նոյեմբերի համարը, որ գրեթե ամբողջությամբ նվիրված է հայրենադարձությանը: Հանդեսի շապիկի վրա 1947 թ. սփյուռքահայերին հայրենիք բերող նավերից մեկի պատմական լուսանկարն է` «Մի երազի իրականացում-Նախկինում եւ այժմ» (Realizing a Dream. Then and Now) ընդհանուր խորագրի ներքո: Լուիզ Մանուկյան-Սիմոնի խմբագրապետությամբ լույս տեսնող հանդեսի ներկա համարը,**




**ինչպես ասվեց, գրեթե ամբողջությամբ նվիրված է հայրենադարձության խնդրին` պատմական, խիտ, բայց ամբողջական ակնարկով բացվող` ցեղասպանությունից մազապուրծ հայերին մնացած վերջին հողակտորի վրա ազգահավաքվելու, մայր երկրին նյութապես օգնելու, հայրենադարձ կարավաններով Հայաստան վերադառնալու դրվագների արագ թվարկումով հագեցած (առաջնորդող հոդվածի հեղինակներ` Արիս Ղազինյան եւ Սուրեն Մուսայելյան): Հանդեսի այս գլխավոր հատվածի հիմնական մասը սակայն հատկացված է մերօրյա բիզնես-մասնագիտական բնույթի հայրենադարձությանը, մի շարք կոնկրետ օրինակների անդրադարձումով: Հոդվածագիրներ Ջոն Հյուզը, Գայանե Աբրահամյանը, Սիրանուշ Գեւորգյանը եւ Գայանե Մկրտչյանը (գրեթե բոլորն էլ ArmeniaNow ինտերնետային շաբաթահանդեսի աշխատակիցներ եւ խմբագիր) ակնարկներ ու հարցազրույցներ են տպագրել անկախության տարիներին գործարարական կամ մասնագիտական իրենց հմտությունները մայր հայրենիքում բանեցնող որոշ սփյուռքահայերի մասին, տպավորիչ լուսանկարների ուղեկցությամբ: Ընթերցողը ավելի մոտիկից կարող է ծանոթանալ Հայաստանում զբոսաշրջության, առողջապահության, կրթության, կապի ու հատկապես «Տաթեւի թեւեր» ծրագրով հայտնի Բեկոր եւ Մարի Լու Փափազյանների դիմագրաված հայրենական մարտահրավերներին, Artbridge գրախանութ-թեյարանի հիմնադիր Շաքե Հավան-Կարապետյանին, ՎիվաՍելի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանի կորպորատիվ բիզնեսի ասպարեզում բերած նորություններին, «Դոլմամա Ժիրայրի» (Ժիրայր Ավագյան) Երեւանում հիմնած բիզնեսներին (ըստ ինձ` չափազանցեցված եւ որոշապես գովազդային), ռազմաքաղաքական վերլուծաբան Ռիչարդ Կիրակոսյանի տպավորություններին, «Լույս» հիմնադրամի հիմնադիր Ժաքլին Կարասլանյանին, լրագրող Ջոն Հյուզին ու նրա ընտանիքին, Ալեք Սարդարի Հայաստանում քաղաքացիական հասարակություն ստեղծելու ջանքերին, նախորդ տարի առաքելությունը Հայաստանում ավարտած Արփի Վարդանյանի (Ամերիկայի հայկական համագումարի նախկին տնօրեն) հայրենական փորձառությանը, ուսթեզ Երվանդ Մինասյանի արաբագիտության ոլորտում կատարած կարեւոր աշխատանքին, Բաղդադից մայր հայրենիք վերադարձած մի շարք ընտանիքների, ինչպես շինարար Րաֆֆի Մեսրոպյանի, Վիգեն Կեդեկյանի գործունեությանը, Սիրիայից վերջին տարիներին հայրենադարձված Շանթ Բոզոյանի, Ատրուշան Շաքըյանի, «Հալեպ» խանութների սեփականատեր Գեւորգ Սարյանի, Նաիրի Մկրտչյանի, հրաշալի լրագրող-հաղորդավար Աբրահամ Գասպարյանի, բժիշկ Հրանտ Աճյանի եւ երգիչ Արսեն Գրիգորյանի, ինչպես նաեւ Իրանից հայրենադարձված թարգմանիչ Էդուարդ Հախվերդյանի, ծնելիության ծրագրերի մասնագետ Նաիրի Մելքումյանի, «Արիա» ռեստորանի տեր Հենրիկ Նավասարդյանի, մեխանիկ Սեւակ Հովհաննիսյանի գործունեությանը:**

**Հանդեսի այս համարը, մի քիչ շեշտված վարդագույն գույներով ներկայացնում է նոր հայրենադարձներին ու հայրենադարձությունը, ըստ երեւույթին իր առաջ ոչ միայն ճանաչողության խնդիրը դնելով, այլեւ հայրենադարձության հարցը միշտ արծարծ պահելու ջանադրությամբ:**

**Հ. Ա.**

ԱԶԳ

# Միջազգային

## Լեհ Անջեյ Կասպրշիկը ինչպե՞ս է գնալու Ղարաբաղ

Միգուցե ներքոհիշյալ երկու իրադարձությունների միջեւ որեւէ կապ չկա, բայց դրանց հերթականությունը բավական հետաքրքրական է: Նախ՝ Եվրոմիության հանձնաժողովի նախագահ Ժոզե Մանուել Բարոզուն երեկ ԵՄ էներգետիկայի հարցերով կոմիսար Գյունտեր Օտինգերի հետ ժամանեց Բաքու, այնտեղից էլ եվրոպացիները պետք է մեկնեն Թուրքմենստան:

Այցի ընթացքում եվրոպացի պաշտոնյաները կհանդիպեն Իլհամ Ալիեւին եւ Թուրքմենստանի նախագահ Գուրբանգուլի Բերդիմուհամեդովին. «Ադրբեջանն ու Թուրքմենստանը ԵՄ-ի համար առանցքային գործընկեր են ինչպես «Արեւելյան գործընկերության» շրջանակներում, այնպես էլ Եվրոպայի ռազմավարության առումով Միջին Ասիայում: Եվրոպան շահագրգռված է մեր հարաբերությունների ամրապնդմամբ, մասնավորապես՝ մենք մեծապես հետաքրքրված ենք այս տարածաշրջանից եկող էներգառեսուրսների անվտանգությամբ եւ ծավալի մեծացմամբ: Այս կտրվածքում ես կցանկանայի ընդգծել «Հարավային հոսքի» կառուցման նշանակությունը, որով գազը Կասպյան տարածաշրջանից անմիջապես կհասնի եվրոպացի սպառողներին», այս հայտարարությամբ հանդես է եկել Բարոզուն նախքան Բաքու հասնելը՝ հավելելով, որ «Ադրբեջանի եւ Թուրքմենստանի հետ ջանքեր կգործադրեն, որպեսզի իրենց ռազմավարական նշանակություն ունեցող նախագծերը իրականություն դառնան»:

Նշենք նաեւ, որ Բարոզուն Բաքվում Իլհամ Ալիեւի հետ համաձայնեցրեց «ԵՄ-Ադրբեջան. համագործակցություն հանուն արդիականացման» համաձայնագիրը, ըստ որի Ադրբեջանը պարտավորված կլինի քաղաքական ու տնտեսական լուրջ ռեֆորմներ իրականացնել, իսկ հունվարի 13-ին ստորագրեցին ԵՄ-Ադրբեջան համատեղ արձանագրություն՝ էներգառեսուրսների «Հարավային միջանցքի» ստեղծման առնչությամբ:

Իսկ այժմ այս իրադարձություններին նախորդած «փոքրիկ քայլի» մասին: Հունվարի առաջին օրերին Եվրոմիության «Արեւելյան գործընկերություն» նախաձեռնության, որի անդամ են ինչպես Ադրբեջանը, այնպես էլ՝ Հայաստանը, նախաձեռնողներից Լեհաստանի արտգործնախարարությունը հանդես եկավ բավական տարօրինակ հայտարարությամբ»:

Այսպես, Լեհաստանի ԱԳՆ-ն ոչ թե կոչ է անում, ոչ թե հորդորում է, առաջարկում է ձեռնպահ մնալ, այլ հենց «պահանջում է» իր քաղաքացիներից չմեկնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն: Ինչո՞ւ. «Քանի որ այն ադրբեջանական տարածք է եւ, համաձայն միջազգային իրավունքի, պետք է ձեռք բերել Բաքվի համաձայնությունը»: Ուրեմն, եթե մի պահ մոռանանք դիվանագիտական բառապաշարը, իսկ այնտեղ անգամ «պահանջում է» տերմինը դժվար թե օգտագործվի, ապա զավեշտալի է անգամ այն «միամիտ լեհերի» վիճակը, որոնք ԼՂՀ մեկնելու համար ձեռք կբերեն Բաքվի համաձայնությունը, հետո՞, իսկ մեկնո՞ւմը, իսկ որտեղի՞ց...

Ինչպես վերը նշեցինք, հնարավոր է, որ «էներգակիրների ապահով ու ամրապնդվող միջանցք» ստեղծելու համար ԵՄ-ն՝ ի դեմս ոչ պատահականորեն ընտրված Լեհաստանի, փորձում է այս կերպ սիրաշահել Բաքվին: Ինչեւէ, Լեհաստանի ԱԳՆ-ի հայտարարության կապակցությամբ արդեն իսկ իրենց տարակուսանքն ու դժգոհությունն են հայտնել հայաստանյան 26 երիտասարդական կազմակերպություններ:

Վարշավային պատասխանող հայտարարության մեջ մասնավորապես նշված է. «Եթե Լեհաստանի արտաքին քաղաքական գերատեսչությունն իրեն համարում է միջազգային իրավունքի գիտակ, ապա կցանկանայինք հիշեցնել, որ Արցախի ժողովուրդը ինքնորոշվել ու անկախ է ապրում հենց այդ նույն միջազգային իրավունքներին համահունչ»:

Երեկ Լեհաստանի ԱԳՆ-ի հայտարարության կապակցությամբ տարակուսանք հայտնեց նաեւ ԼՂՀ արտգործնախարարությունը. «Վերջին ժամանակներս Բաքվի քարոզչամեքենայի շահարկումների առարկա է դարձել Ադրբեջանում Լեհաստանի դեսպանության կայքէջում տեղադրված Լեհաստանի ԱԳՆ-ի հաղորդագրությունը, որի առիթը 2010 թվականի դեկտեմբերին Եվրախորհրդարանի պատգամավոր, Հայաստանի հարցով հիմնական զեկուցող Թոմաշ Պորեբայի այցն էր ԼՂՀ:

Անտարակույս, ԼՂՀ այցելությունների անցանկալիության վերաբերյալ Լեհաստանի արտաքին քաղաքական գերատեսչության հաղորդագրությունը երաշխավորական-տեղեկատվական բնույթ է կրում, ինչի մասին մասնավորապես վկայում է այն, որ Լեհաստանի ԱԳՆ-ի պաշտոնական կայքէջում նշված տեղեկատվությունը բացակայում է: Սակայն հավասարիմ մնալով իրեն՝ պաշտոնական Բաքուն ուռճացնում է հիշյալ թեման:

Այդուհանդերձ, տարօրինակ է մնում Լեհաստանի իշխանությունների դիրքորոշումը, քանի որ նաեւ այդ երկիրն է նախաձեռնել ԵՄ «Արեւելյան գործընկերություն» ծրագիրը, որը հիմնված է ժողովրդավարության եւ միջազգային իրավունքի սկզբունքների վրա: Արդյոք լեհական իշխանությունները դրանով իսկ չե՞ն ոտնահարում իրենց քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները: Չէ՞ որ դեռ ոչ մեկը չի բեկանել ազատ տեղաշարժվելու եւ ճշմարտացի տեղեկատվություն ստանալու իրավունքի միջազգային համաձայնագիրը:

Միանգամայն տեղին կլինի հարց ուղղել Լեհաստանի արտաքին գործերի նախարար պան Ռադոսլավ Սիկորսկուն, թե արդյոք տվյալ սահմանափակումը տարածվո՞ւմ է նաեւ լեհ քաղաքացի Անջեյ Կասպրշիկի վրա: Ի դեպ, ամեն ինչից դատելով, Բաքվի չինովնիկների սպառնալիքները հազիվ թե տպավորություն թողնեն որեւէ մեկի մեջ:

Չնայած արտասահմանցիների այցերը Արցախ Բաքվում համարում են քրեորեն պատժելի հանցանք, անկախության հռչակումից ի վեր ԼՂՀ են այցելել տասնյակհազարավոր օտարերկրացիներ՝ զբոսաշրջիկներ, քաղաքագետներ, գործարարներ, դերասաններ, լրագրողներ, այդ թվում՝ Ադրբեջանի ամենաբարեկամ երկրների, օրինակ, Թուրքիայի ներկայացուցիչներ:

Ավելին, Արցախ այցելող արտասահմանցի զբոսաշրջիկների թիվը, այդ թվում՝ ԵՄ երկրներից, տարեցտարի կայուն կերպով ավելանում է: Բազմաթիվ օտարերկրացիներ ԼՂՀ են այցելում մի քանի անգամ: Ընդլայնվում է այն երկրների աշխարհագրությունը, որտեղից զբոսաշրջիկներ են ժամանում: 2010 թվականին առաջին անգամ ԼՂՀ են այցելել Գաբոնի եւ Կոտ դ' Իվուարի քաղաքացիներ: Այդ ամենը վկայում է, որ աշխարհում տարեցտարի աճում է հետաքրքրությունը Արցախի նկատմամբ, չնայած Ադրբեջանի ակտիվ հակազդեցությանը եւ այն բանին, որ ԼՂՀ այցելող օտարերկրյա քաղաքացիները հայտարարվում են «նոն գրատա» անձինք:

Զբոսաշրջիկներին հրապուրում են հինավուրց պատմական հուշարձանները, շքեղ բնությունը, առողջ բնապահպանական միջավայրը եւ այլն: Սակայն, նրանց խոսքերով, երկրի հիմնական հարստությունը կազմում են նրա բարյացակամ եւ հյուրասեր մարդիկ: Անկասկած, այսուհետեւ, ԼՂՀ-ում առանձնահատուկ ուշադրությամբ կվերաբերվեն Լեհաստանի քաղաքացիներին, որոնք անտեսելով արհեստական արգելքները՝ կայցելեն Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն», ասված է ԼՂՀ ԱԳՆ հայտարարության մեջ:

Հ. ԱՓՅԱՆ

## Ճապոնիայում ստեղծել են հայելի-ջերմաչափ

Ճապոնական NEC էլեկտրատեխնիկական կոնցեռնը մշակել է անկոնտակտ ջերմաչափ սեղանի սովորական հայելու տեսքով: Սեփական ջերմությունը չափելու համար հարկավոր է պարզապես նայել հայելուն՝ առանց դիպչելու: Մի քանի վայրկյան անց արդյունքը կհայտնվի հայելու մակերեւույթի վրա: Եթե ջերմությունը չափազանց բարձր է, ապա հայելի-ջերմաչափը տագնապի ձայնային ազդանշան կարձակի: Այդ մասին հաղորդում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը՝ վկայակոչելով Տոկիոյի մամուլի հրապարակումները:

NEC-ում ստեղծված ջերմաչափը կարելի է արդյունավետորեն օգտագործել ամեն մի հասարակական վայրում մարդու առողջական վիճակն արագորեն պարզելու համար: Դա հատկապես օգտակար է, օրինակ, գրիպի համաճարակների ժամանակ:

NEC-ը մտադիր է 2011-ին վաճառել ավելի քան 5 հազար հայելի-ջերմաչափ: Դրանք կթողարկվեն երկու տարբերակով եւ կարժենան 98-120 հազար իեն (1,2-1,4 հազար դոլար):



ՃԳՆԱԺԱՄ

## Սաադ Հարիրին մնում է Լիբանանի վարչապետ

### *Քաղաքացիական պատերազմը չի բացառվում*



**Երեկ «Ազգը» հաղորդեց «Հզբոլլահ» արմատական շարժման գործողությունների հետեւանքով Լիբանանի կառավարության փլուզման մասին: Լիբանանյան լրատվամիջոցները հավելյալ մանրամասնություններ են հաղորդում վերջին իրադարձությունների վերաբերյալ:**

**Հունվարի 13-ին Լիբանանի նախագահ Միշել Սուլեյմանը վարչապետ Սաադ Հարիրիին հանձնարարել է կառավարության ղեկավարի պաշտոնում մնալ անցումային ժամանակահատվածում: Ինչ վերաբերում է կառավարության փլուզմանը, դա տեղի էր ունեցել նախօրեին 30 նախարարներից 11-ի պաշտոնաթողության հետեւանքով:**

**Խոսքը «Հզբոլլահը», «Ամալը» եւ «Ազատ հայրենասիրական շարժումը» ներկայացնող նախարարների մասին է: Լիբանանում նախարարների ավելի քան 1/3-ի պաշտոնաթողությունը ինքնաբերաբար նշանակում է կառավարության արձակում: Երկրում նման բան տեղի է ունենում առաջին անգամ:**

**Naharnet կայքը նշում է, որ նախագահ Սուլեյմանը արտերկրից Հարիրիի վերադարձին է սպասում նախարարների պաշտոնաթողության պաշտոնական հաստատման համար: Երեկ նախագահը գլխավոր քաղաքական ուժերի ներկայացուցիչների հետ խորհրդակցություններ է սկսել կառավարության կազմավորման հարցը լուծելու նպատակով:**

**«Հզբոլլահի» եւ մյուս երկու շարժումների 11 նախարարները կառավարությունից դուրս եկան այն պահին, երբ Սաադ Հարիրին Վաշինգտոնում բանակցում էր ԱՄՆ նախագահ Բարաք Օբամայի հետ: Բանակցությունների հիմնական թեման Լիբանանի նախկին վարչապետ Ռաֆիկ Հարիրիի (Սաադի հոր) սպանությունը հետաքննող միջազգային հանձնաժողովի հատուկ դատարանի հետեւությունների մոտալուտ հրապարակումն է: ԶԼՄ-ներում հայտնված տեղեկությունների համաձայն, հանձնաժողովը հայտարարելու է սպանությանը «Հզբոլլահի» մի շարք ներկայացուցիչների մեղսակցության մասին:**

**«Հզբոլլահը» նախօրոք հերքել է հանձնաժողովի հետեւությունները, հայտարարելով, թե խոսքը «ամերիկա-իսրայելական դավադրության» մասին է, որի նպատակը «Հզբոլլահի» վերացումն է Լիբանանի քաղաքական ասպարեզից:**

**«Ալ Մուստաքբալ» սուննի շարժման առաջնորդ Սաադ Հարիրիի գլխավորությամբ «Մարտի 14» դաշինքը 2009-ին հաղթեց Լիբանանի խորհրդարանական ընտրություններում: Դաշինքի մեջ, «Ալ Մուստաքբալից» բացի, մտնում են Սամիր Ջաջայի ֆալանգիստները, Վալիդ Ջումբլաթի դրուզները եւ Ամին Ժմայելի մարոնիտները: «Մարտի 14» դաշինքը 128 տեղանոց խորհրդարանում ունի 71 տեղ: «Մարտի 8» ընդդիմադիր դաշինքը, որի փաստական առաջնորդը «Հզբոլլահ» շիա խմբավորման ղեկավար շեյխ Հասան Նասրալլահն է, ունի 57 տեղ: Այս դաշինքի մեջ մտնում են նաեւ շիաների «Ամալ» կուսակցությունը խորհրդարանի նախագահ Նաբիհ Բերրիի գլխավորությամբ, քրիստոնյաների «Ազատ հայրենասիրական շարժումը» (Միշել Աուն) եւ քրիստոնյաների «Մարադան» (Սուլեյման Ֆրանժիե): Հարկ է նշել, որ վերջերս Ջումբլաթը մերձենում է ընդդիմության հետ:**

**Իսրայելում ուշի-ուշով հետեւում են Լիբանանի իրադարձություններին, սակայն «Հզբոլլահի» կողմից լիբանանա-իսրայելական պատերազմի սանձազերծումը քիչ հավանական են համարում, նշում է newsru.co.il կայքը: Մեկնաբանները «վատ սցենարների» մեջ առավել հավանական են համարում Լիբանանում նոր քաղաքացիական պատերազմի ծագումը: Միջազգային փորձագետների գնահատմամբ, Իրանի եւ Սիրիայի աջակցությունը վայելող «Հզբոլլահի» ներուժը համադրելի է լիբանանյան բանակի ռազմական ներուժի հետ: Սակայն բանակի առավելությունն այն է, որ ունի ուղղաթիռներ եւ ծանր սպառազինություն:**

## Միջկորեական կապերը վերականգնվել են

**Հարավային Կորեայի միավորման նախարարությունը պաշտոնապես հայտարարել է Սեուլ-Փենյան կապի վերականգնման մասին: CNN հեռուստաընկերության տվյալներով, մասնավորապես վերաբացվել են միջկորեական ուղիղ հեռախոսագիծը եւ Կարմիր խաչի հաղորդակցության ուղիները:**

**Սպասվում է, որ կապերի վերականգնումը կնպաստի բաժանված կորեական ընտանիքների վերամիավորմանը, ինչպես նաեւ ուղի կհարթի լիարժեք միջկառավարական երկխոսության ծավալման համար:**

**Երկու Կորեաների միջեւ կապերը խզվել էին 2010-ի մայիսին՝ Դեղին ծովում հարավկորեական «Չհոնան» պահականավի խորտակումից հետո: Սեուլը Փենյանին մեղադրել էր սուզանավից արձակված ականով պահականավը կործանած լինելու մեջ: ԿԺԴՀ-ն մերժել էր մեղադրանքները եւ ի նշան բողոքի, խզել էր կապերը Հարավային Կորեայի հետ:**

**2011-ի հունվարի 8-ին Փենյանը Սեուլին առաջարկել էր անմիջական բանակցություն սկսել առանց նախապայմանի, սակայն հարավցիները մերժել էին առաջարկությունը, գտնելով, որ հյուսիսցիներն այնքան էլ անկեղծ չեն, քանի որ չեն հրաժարվում իրենց միջուկային ծրագրից:**

## Անձրեւներից հարյուրավոր զոհեր Բրազիլիայում

**Ռիո դե Ժանեյրոյի նահանգում արեւադարձային անձրեւների առաջացրած հեղեղումներից ու սողանքներից զոհվել է առնվազն 257 մարդ: Զոհերի թիվն անընդհատ ավելանում է: Հատկապես տուժել են նահանգի լեռնային շրջանները, որտեղ գտնվում են Տերեզոպոլիս, Նովա-Ֆրիբուրգու եւ Պետրոպոլիս քաղաքները:**

**Նովա-Ֆրիբուրգու քաղաքում մեկ գիշերվա ընթացքում տեղացած հորդ անձրեւները գերազանցել են ամբողջ հունվարի նորման: Ցեխի ու քարերի հոսքերը ծածկել են ամբողջ թաղամասեր: Տուժել են ոչ միայն աղքատների ավանները, այլեւ զբոսաշրջության բարեկարգ շրջանները: Էներգամատակարարումը եւ հեռախոսակապը խզված են:**

**Նահանգում փակ են ոչ միայն լեռնային ավտոճանապարհները, այլեւ Ռիո դե Ժանեյրոն երկրի ներքին շրջաններին կապող մայրուղին: Այս ամենը դժվարացնում է փրկարարական աշխատանքների իրականացումը: Ֆրանսպրեսը հաղորդում է, որ աղետյալ գոտում հայտարարված է արտակարգ դրություն:**

# Հրաժեշտի խոսք մեծանուն մաեստրո Օհան Դուրյանին

Օհան Դուրյանի մասին խոսք ասելը հեշտ չէ:

Նրա մասին ասված խոսքը միշտ էլ թերի կլինի իր մեծության, բացառիկության, անկրկնելիության հետ համեմատած: Նրա կենսագրությունը եւ անցած ստեղծագործական ուղին չափազանց հարուստ է եւ նրա մասին ասելիքը առատ, բայց խոսքս պետք է աշխատեմ ներկայացնել հնարավորինս սեղմ եւ համառոտ:

Համայն աշխարհին պատկանող էակ էր Օհան Դուրյանը` մանկան նման մաքուր եւ անխարդախ: Ապրում էր իր ենթագիտակցության օրենքներով, անհաղորդ էր փառքի գայթակղությանը, փառքն էր իրեն որոնում-գտնում: Վերանձնական ապրում էր երաժշտության աշխարհում եւ ինքը` համակ երաժշտություն էր: Տարիներ առաջ բախտ եմ ունեցել համագործակցել մաեստրոյի հետ, կատարելով Վերդիի «Ռեքվիեմ»-ի սոպրանոյի սոլոն, եւ երգել իր հեղինակած ռոմանսները` իր նվագակցությամբ: Նրա արվեստի, նրա մեծության նկատմամբ ունեցած պաշտամունքս ու տարիների անձնական մտերմությունը շարունակվում էր մինչեւ վերջերս: Ինձ համար ահավոր է նույնիսկ մտածելը, որ մաեստրոն մեկնեց անվերադարձ:

Մեծ մարդկանց մասին շատ եմ կարդացել, մեր ազգի մեծերից որոշների հետ էլ մարդկային հաղորդակցություն-մտերմություն եմ ունեցել: Նրանք երբեմն նույնանում են իրենց վարքագծով, իրենց մտածելակերտով, առօրյա կյանքի անօգնականությամբ, բացառիկ ազնվությամբ, կամակորությամբ: Անզարդ են, աննախապաշար, հավատարիմ են իրենց սկզբունքներին, մշտապես պաշտպանում են իրենց ներքին ձայնին: Իսկ Դուրյան փոքրամարմին «Հսկան»` արվեստի մեծ նվիրյալը, բնության մի բացառիկ պարգեւ էր մարդկությանը: Այնքան մաքուր էր, այնքան ազնիվ, այնքան անաչառ, այնքան մարդասեր, որ իր իսկ էությամբ արդեն դարձել էր լույսի աղբյուր: Բայց արվեստի հարցերում չափազանց անհանդուրժող, անզիջող էր` մանավանդ միջակությունների հանդեպ: Նրա համար արվեստի միջին վիճակը բացառյալ էր, փայլեցրած արհեստ: «Իրական արվեստագետի նպատակը` կատարյալի ձգտումն է: Թեւածումների համար ծնվածը պետք է թռիչքի պաշտամունք ունենա», -ասում էր նա: Նրա համար արվեստի միակ բարձրագույն աստիճանն էր արվեստը: «Ինձ համար չափանիշ են հանդիսացել դիրիժորներ` Ֆուրտվենգլերը, Տոսկանինին, Ֆոն Կարայանը, բայց իմ ամենամեծ ուսուցիչը` նորին մեծություն երաժշտությունն է», -ասում էր նա: Երբ մաեստրո Դուրյանն էր բեմի վրա, ուրեմն վայելքի տոն էր և՛ համերգասրահում և՛ ունկնդրի հոգում: Որեւէ գործի կատարման պահին, նվագախմբի երաժիշտներին ներշնչելով իր մոգականությամբ` անանձնացած, ոգեղենացած իր հնչյուն-հրաշքի աշխարհն էր տեղափոխում ունկնդրին: Դրա համար էլ երաժշտությամբ ներշնչված հանդիսականը դժվարությամբ էր բաժանվում նրանից, սրահը ողողելով բրավոներով ու երկարատեւ ծափողջյուններով: «Դիրիժորի իմ արվեստը սիրում եմ անսահմանորեն, եւ այն միշտ վեր եմ դասել երկրային, մարդկային բոլոր հաճույքներից», -ասում էր նա: Աշխատել էր աշխարհի տարբեր երկրներում, երկար տարիներ եղել էր Լայպցիգի «Գեւանդհաուզ» հանրահայտ նվագախմբի գեղարվեստական ղեկավար, Ավինյոնի, Մարսելի օպերաներում, որպես երաժշտական գլխավոր ղեկավար, Ավստրիայի Բադեն քաղաքում` ռադիո-հեռուստատեսության նվագախմբի գլխավոր դիրիժոր: Որպես հրավիրյալ նվագավար աշխատել էր Լայպցիգի «Կոմիշե» օպերային թատրոնում, Հռոմի «Օրկեստրա դե լա Ակադեմիա», Վիեննայի «Տոնկյունստլեր», Փարիզի «Կոլոն», «Լա Մուռո», «Նասիոնալ իլ դը Ֆրանս», «Նուվել օրկեստր Ֆիլարմոնիկ» նվագախմբերում: Համերգներով հանդես էր եկել` Շվեցարիայում, Ֆինլանդիայում, Շվեդիայում, Նորվեգիայում, Հռոմում, Վիեննայում, Դրեզդենում, Բելգիայում, Ամստերդամում, Միլանում, Բելգրադում, Սոֆիայում, ԱՄՆ-ում, Քեյփթաունում, Մոսկվայում, Պետերբուրգում, Ռիգայում, Վիլնյուսում, Կիեւում, Մինսկում...Այսպես կարելի է շարունակել շարքը, որովհետեւ իր երկարամյա գործունեության ընթացքում մաեստրոն համագործակցել էր աշխարհի հարյուրից ավել տարբեր նվագախմբերի հետ, եւ բոլոր նվագախմբերի հետ խոսում էր իրենց լեզուներով: Նա տիրապետում էր յոթը օտար լեզուների: «Նվագախումբը ինձ համար հսկա մի երգեհոն է, որով հնչեցնում եմ մարդկային հոգու եւ խղճի մեղեդիացված համանվագը»,- ասում էր նա: Ֆրանսիական կառավարությունը Օհան Դուրյանին` Ֆրանսիայի արվեստում իր ծառայությունների համար արժանացրել է «Ֆրանսիայի արվեստի եւ գրականության ասպետ»-ի կոչման: Միջազգային International Star Registry կոմիտեն տիեզերական համաստեղության աստղերից մեկը վերանվանել է Օհան Դուրյանի անունով: Հայաստանում արժանացել է պետական մրցանակների, Ժողովրդական արտիստի կոչման եւ բազմաթիվ այլ պետական գնահատանքների ու մեդալների: Օհան Դուրյանի հավատամքը երաժշտությունն էր, երաժշտության հրաշագործ աշխարհը նա մտնում էր ուխտավորի երկյուղածությամբ: «Բեմը ինձ համար սրբավայր է, վերացման վայր: Հանդիսասրահից բարձրանում, թափանցում եմ երգահանի հոգու եւ ասելիքի մեջ, աշխատում եմ որքան հնարավոր է մտնել հեղինակի ոգեղենացած աշխարհը եւ աներեւույթ կամուրջ դառնալ հեղինակի եւ ունկնդրի միջեւ»: Նա ուներ հանճարին հատուկ մի կարողություն եւս` «բացառիկ հիշողություն», դրան գումարած գերմարդկային աշխատասիրություն: Ահռելի երգացանկ` օպերաներ, սիմֆոնիաներ, օրատորիաներ, ռեքվիեմներ, կոնցերտներ, Բեթհովենի իննը, Բրուքների տասը սիմֆոնիաները, Վերդիի, Մոցարտի, Ֆորեի ռեքվիեմները, Բեթհովենի «Էգմոնտ» ուվերտյուրը, Ռախմանինովի, Մոցարտի կոնցերտները, Մալերի, Բրամսի, Սեն Սանսի, Դեբյուսիի, Հենդելի, Ռավելի, Դվորժակի, Հայդնի, Չայկովսկու, Շոստակովիչի, Բորոդինի, Խաչատրյանի սիմֆոնիաները: Վերդիի «Աիդա», «Դոն Կարլոս» , «Տրավիատա», Վագների «Լոենգրին», Բորոդինի «Իշխան Իգոր» օպերաները, մեր ազգային օպերաներից «Անուշ»-ը, «Ալմաստ»-ը, «Արշակ երկրորդ»-ը, հայ ժամանակակից երգահանների սիմֆոնիաները...Հայ երգահաններից որոշներին էլ օգնել է սիմֆոնիա գրել: Մի անվերջանալի երգացանկ, աշխարհի երաժշտական գանձարանից գրեթե ամեն ինչ, եւ այդ ահռելի երգացանկի մի մեծ մասը ղեկավարում էր փակ պարտիտուրով, երաժշտությունը պահելով հիշողության եւ իր էության մեջ. անշարժ կանգնած նվագավարի հարթակին, առանց դիրիժորական փայտիկի` իր գեղեցիկ «խոսող» ձեռքերով երաժշտություն էր արարում:

Ծնվել է Երուսաղեմում: Սկզբնական կրթությունը ստացել Նազարեթի գերմանական դպրոցում, հետո անցել հայկական կրթօջախ եւ ավարտել Երուսաղեմի հայկական դպրոցը, հետո Երուսաղեմի հրեական կոնսերվատորիան, ավարտելով ` դաշնամուրի, երգեհոնի եւ ստեղծագործական բաժինները: Այնուհետեւ մեկնել է Շվեցարիա եւ Ցյուրիխի երաժշտանոցում սովորել դիրիժորություն, եւ ստեղծագործական դասեր առել Ռոժե Դեզորմիերի եւ Ժան Մարտինոնի մոտ: Մաեստրոն ունի նաեւ ինքնուրույն ստեղծագործություններ` սիմֆոնիկ պատկերներ, ռոմանսներ եւ «Կոմիտասայանա» սիմֆոնիկ սյուիտ, որը նվիրել է մեծն Կոմիտասին:

1957 թվականին արժանահիշատակ Վազգեն Առաջին Վեհափառի կողմից հրավիրվել էր հայրենիք եւ հաստատվել այնտեղ: Եվրոպական արվեստի քարքերը յուրացրած, գիտելիքներով եւ փորձառությամբ բեռնված եկել է հայրենիք եւ իր մեծ լուման ներդրել դասական արվեստի եւ սիմֆոնիզմի գործում, իր ստեղծագործական կյանքի մի պատկառելի մասը նա հատկացրել է դասական արվեստի զարգացմանը հայրենիքում: Մեկնում, հայրենիքի կարոտ, վերստին վերադարձ... Օժտված լինելով հզոր անհատականությամբ, նա չէր համակերպվում տիրող համակարգի պարտադրանքներին, եւ աշխարհի հանդիսատեսի առջեւ անարգել հանդես գալու պահանջը նրան նորից տանում էին աշխարհի այն վայրերը, որտեղ անկաշկանդ դրսեւորում էր իր տաղանդը: Որոշ տարիների բացակայությունից հետո` նորից հայրենիքի կարոտ, նորից պարտքի զգացում, նորից տունդարձ:

1991 թվականին մերժելով Լայպցիգի «Գեւանդհաուզ» հանրահայտ նվագախմբի գլխավոր դիրիժորի պաշտոնի առաջարկը, անսաց անկախացած հայրենիքի նախագահի ու մշակույթի ղեկավարության կանչին, վերադարձավ հայրենիք` հույս ունենալով , որ այս անգամ ազատ Հայաստանում իր տաղանդը կդրսեւորի ինչպես մյուս քաղաքակիրթ երկրներում: Հանգրվանել էր Նորքի գեղատեսիլ բարձունքում, կնոջ` երգչուհի Ալիս Շամիրյանի հետ, որը պահապան հրեշտակի նման սատարեց նրան, պարուրեց նրան մեծ սիրով, գուրգուրաց մեր սիրելի մաեստրոյի վրա, իր կյանքը նվիրաբերեց, բայց անարդարությունից ու անօրենությունից չկարողացավ փրկել նրան: Օհան Դուրյանը անկախացած հայրենիքի ամենադժվար տարիներին տասը տարի առանց վարձատրվելու աշխատեց ազգային օպերային թատրոնում եւ իր անունը կրող, իր ստեղծած Ռադիոհեռուստատեսության նվագախմբում, հոգեւոր սնունդի աղբյուր դառնալով և՛ երաժիշտների և՛ հայրենի արվեստասեր ժողովրդի համար: Երաժշտական այդ երկու օջախների կոլեկտիվներն էլ բառացիորեն պաշտում էին մաեստրոյին: «Սիրտս արյունոտում է Հայաստանի ժողովրդի վիճակի համար», -ասում էր նա: Օհան Դուրյանը անմնացորդ սիրում էր Հայաստան աշխարհը, թրթռում նրա վերելքով, վշտանում տիրող վարչակարգի անօրենությունների, բռնությունների, նյութապաշտության ու պաշտոնամոլության վրա, որի զոհերից մեկն էր նաեւ ինքը: Նա գործուն մասնակցություն էր ունենում ընդդիմության հավաքներին եւ իր բոցավառ ելույթներով, ուղերձներով խանդավառում պայքարի ելած ժողովրդին: Ցանկանում էր կայացած տեսնել մեր պետությունը, խորապես տառապում էր ժողովրդի անելանելի ներկայով եւ հոգու անքակտելի կապերով կապված էր իր սիրելի ժողովրդի հետ, պայքարում էր հայրենասիրության ջահը մշտապես ձեռքին, որպես իր հայրենիքի անկոտրում զինվոր: Վահան Թեքեյանը ասում է. «Որպէսզի կարենանք ճանչնալ արդարութիւնը, անարդարութիւնը պէտք է գործէ, գործածէ մեզ, տառապեցնէ եւ ՄԵՌՑՆԷ մեզ: Մեզմէ իւրաքանչիւրը անոր զոհն է, եւ ուրիշներուն հարուածելու գործիքը»:



**ՄԵԼԱՆՅԱ ԱԲՈՎՅԱՆ**
**Երգչուհի**
**1-10-2011թ. Լոս Անջելես**

---

ՏԵՍԱԿԵՏ

# «Գեղանքի» եւ «Կեղանքի» միջակայքում

«Գրական թերթը» տեղեկատվություն էր տպագրել «Գեղանք» եւ «Կեղանք», այս վերջինի մասին` թող թույլ տրվի ասել, «մրցանակներ» բաշխելու մասին: Շատ ցավալի է, որ ՀԳՄ նախագահ Լեւոն Անանյանի «մտքի թռիչքը «Կեղանք»-ից այն կողմ չի անցել»: Ինչն, ի դեպ, վկայում է, որ «գրական կյանքի ոչ օբյեկտիվ լուսաբանման մասին» նրա «մտահանգումը» ոչ այլ ինչ է, քան` ՀԳՄ նախագահի աթոռի հանդեպ հիվանդագին սիրո դրսեւորում:

Այլ իրավիճակներում Աբգար Ափինյանը եւ Կիմա Եղիազարյանը կհայտարարվեին «ժողովրդի թշնամի» եւ «ոչ այնքան հեռավոր տեղեր մեկնելու ուղեգիր» կստանային: Կամ նրանց պարզապես «կթրխկացնեին»: Ինչպես 1937-ին` «ոչ ժողովրդի բարեկամ» հռչակվածներին:

Ուղղակի Լեւոն Անանյանն ընտրել է «կատակի ժանրը», քանի որ ժամանակներն այլ են: Բայց ո՞րն է Գեւորգ Աբովի եւ Լեւոն Անանյանի տարբերությունը: Նմանություններն ավելի շատ են: Եւ դրանով, կարծես, ամեն ինչ ասվում է:

Անանյանից առաջ էլ ՀԳՄ նախագահ ունեցել ենք` Հրանտ Մաթեւոսյանին: Հայտնի է, որ նա եւ Վարդգես Պետրոսյանը տարիներ շարունակ եղել են «հակառակ ճամբարներում»: Քաղաքական չէ` գրական: «Գյուղագիրների» եւ «քաղաքագիրների» բանավեճը` ցայտուն օրինակ: Բայց Վարդգես Պետրոսյանի մասին ո՞վ է այդքան սիրով եւ բնութագրական գրել, քան Հրանտ Մաթեւոսյանը: Երեւի` ոչ ոք: Որովհետեւ Հրանտ Մաթեւոսյանը մեծություն էր:

Պատկերացնել կարելի՞ է, որ Հրանտ Մաթեւոսյանը «Կեղանք» հնարեր եւ այդ անունով մրցանակ շնորհեր Լեւոն Անանյանին: Հրանտ Մաթեւոսյանը նման «կատակ» չէր անի եւ չարեց:

«Պաստեռնակին ես չեմ կարդացել, բայց նա հակախորհրդային գրող է»,- այսպես ասում էին «հին, բարի» խորհրդային ժամանակներում: Հիմա Լեւոն Անանյանն է ասում, որ վաղուց Աբգար Ափինյանի հոդվածները չի կարդում, բայց գիտի, որ նա «ոչ օբյեկտիվորեն է լուսաբանում Հայաստանի գրական կյանքը»:

Բայց ի՞նչ է նշանակում լինել օբյեկտիվ կամ ոչ օբյեկտիվ:

Եթե մարդ թթու խոսք է ասում ՀԳՄ նախագահի հասցեին, դրանից ինքնաբերաբար հետեւում է, որ նա «ոչ օբյեկտի՞վ» է դառնում: Ըստ Լեւոն Անանյանի` այո: Բայց չէ՞ որ ԽՄԿԿ ԿԿ քարտուղար Ժդանովը նույնպես «շատ արդարացիորեն» գտնում էր, որ «Զվեզդա» ամսագիրը «ոչ օբյեկտիվորեն է պատկերում խորհրդային իրականությունը»: Դրա համար էլ գրող Զոշչենկոն պետք է համարվեր «արգելված»: Ախմատովան` նույնպես:

Ժամանակ առաջ Արցախի ԳՄ նախագահությունը մի «որոշում» էր կայացրել եւ «ոչ հայրենասիրական» որակել... Վազգեն Օվյանի ողջ գրական ժառանգությունը: Հավելումն` կազմակերպվել էր «մտավորականության ներկայացուցիչների» նամակների հոսք, որով պահանջվում էր... «գրադարաններից հավաքել եւ ոչնչացնել» գրողի գրքերը, չեղյալ հայտարարել Ստեփանակերտի փողոցներից մեկը նրա անվամբ կոչելու մասին քաղաքապետարանի որոշումը:

Ի՞նչ կապ ունի դա Լեւոն Անանյանի հետ:

Ուղղակի, քանի որ Վազգեն Օվյանի «ապազգայնության» մասին հոդվածը նախ տպագրվել էր Արցախի ԳՄ «Եղիցի լույս» պաշտոնաթերթում, ապա արտատպվել «Գրական թերթում»: Եւ երբ արցախցի մի խումբ մտավորականներ իրենց բողոքն էին հայտնել «ժդանովականության» այդ դրսեւորման դեմ, «Գրական թերթը» դրան արձագանքել էր Արցախի ԳՄ նախագահության որոշումն ըստ էության դրվատող մի հրապարակմամբ, որն ստորագրել էին ՀԳՄ նախագահ Լեւոն Անանյանը, ՀՀ ԳԱԱ Գրականության ինստիտուտի տնօրեն Ավիկ Իսահակյանը, ակադեմիկոս Սերգեյ Սարինյանը եւ արդեն հանգուցյալ` բանաստեղծ Բոգդան Ջանյանը:

Պատճառն այն է, որ Վազգեն Օվյանի որդու` ՀԳՄ անդամ Վարդգես Օվյանի եւ Արցախի ԳՄ նախագահ Վարդան Հակոբյանի «ջրերը նույն առվով չեն հոսում»: Մարդը «հանդգնում է» Վարդան Հակոբյանին ասել, որ մի քիչ տգեղ է, երբ ԳՄ նախագահն Արցախում «նախարարական աշխատավարձ» է ստանում եւ պետության միջոցներով «Ընտիր երկեր» տպագրում: Այն էլ` 6-7 հատորով: Ասում եւ կրակն է ընկնում. Արցախի ԳՄ-ն որոշում է ... Վարդգես Օվյանին հեռացնել իր «շարքերից». եւ Լեւոն Անանյանն իր «Գրական թերթ»-ով կանգնում է ոչ թե տուժածի, այլ` որոշում ընդունողի «օբյեկտիվ դիրքերում»:

Այսքանից հետո զարմանալի է միայն, որ հայ գրողը եւ լրագրողը «ձեռամբ Լեւոն Անանյանի» ստանում է որեւէ մրցանակ: Լինի դա «Գեղանք», թե` «լավագույն մանկական բանաստեղծության համար»: Մի՞թե չեն տեսնում «գեղանքի» եւ «կեղանքի» պղտոր միջակայքը. երբ նույն ԳՄ-ն սահմանում է երկու` «Գեղանք» եւ «Կեղանք», երկրորդի մասին` դարձյալ թող թույլ տրվի ասել` «մրցանակ», ապա ի՞նչ տարբերություն, թե որն ով է ստանում: Չէ՞ որ երկուսն էլ տրվում է նույն ձեռքով: Եվ, վերջապես` չէ՞որ վաղը «Գեղանք»-ը կարող է «Կեղանք» դառնալ: Եվ` ընդհակառակը: Երբ ջրերը պարզված լինեն:

**ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ**
**Ստեփանակերտ**

# «Իմպուլսն» առաջինը մեկնեց արտերկիր


ՖՈՏՈԼՈՒՐ

2011-ի ֆուտբոլային մրցաշրջանին նախապատրաստվող հայկական ակումբներից առաջինն արտերկրյա ուսումնամարզական հավաքի է մեկնել Դիլիջանի «Իմպուլսը», որը հունվարի 11-ից մարզումները շարունակում է Սոչիում:

Ինչպես տեղեկացանք ակումբի մամուլի քարտուղարությունից, «Իմպուլսը» գլխավոր մարզիչ Արմեն Գյուլբուդաղյանցի գլխավորությամբ նոր մրցաշրջանի նախապատրաստությունը սկսել է դեկտեմբերի կեսերից Դիլիջանում: Այնուհետեւ թիմն ուսումնամարզական հավաք անցկացրեց ֆուտբոլի ակադեմիայում: Սկզբնական շրջանում հիմնական ուշադրությունը դարձվում էր ֆուտբոլիստների ֆիզիկական պատրաստությանը, ֆունկցիոնալ ընդհանուր վիճակի բարելավմանը:

Նախապատրաստության 2-րդ փուլում, որն այժմ ընթանում է Սոչիում, «Իմպուլսի» մարզումներում արդեն մեծ ուշադրություն է դարձվելու խաղային որակների զարգացմանը, տեխնիկատակտիկական հարցերին: Սոչիում ուսումնամարզական հավաքին մասնակցում են թիմի 22 ֆուտբոլիստներ, որոնց մեջ կան նաեւ նորեկներ: «Բանանցից» թիմ է հրավիրվել պաշտպան Էդուարդ Կակոսյանը: «Իմպուլսի» հետ 2-ամյա պայմանագիր է կնքել «Ուլիսի» վրացի կիսապաշտպան Գագա Թբիլաշվիլին, որը Հայաստանում հանդես եկած լեգեոնականներից բոլորից երկար է խաղացել հայկական թիմերում: Նա Հայաստանում իր առաջին հանդիպումը... Նա Հայաստանում իր նորամուտը նշել է «Դինամո-Զենիթում», որի լուծարումից հետո տեղափոխվել է «Գանձասար»: Վերջին երկու մրցաշրջանները Գագան անցկացրեց «Ուլիսում»՝ թիմի հետ 2 անգամ արժանանալով բրոնզե մեդալի: «Իմպուլսում» հանդես կգա նաեւ «Ուլիսի» մեկ այլ նախկին կիսապաշտպան Նարեկ Դավթյանը, որին Արմեն Գյուլբուդաղյանցը ճանաչում է դեռեւս «Փյունիկը» գլխավորելիս, երբ ֆուտբոլիստը խաղում էր «Փյունիկ-2»-ում: «Գանձասարից» «Իմպուլս» է տեղափոխվել պաշտպան Հայկ Չիլինգարյանը, որը սակայն վնասվածքի պատճառով Սոչի չի մեկնել:

Ուսումնամարզական հավաքի ժամանակ կփորձարկվեն մի քանի նոր ֆուտբոլիստներ, որոնց թվում կլինի նաեւ ժամանակին «Արարատում» հանդես եկած բելառուս Ռոման Հարկուշան: Ինչ վերաբերում է դիլիջանցիներին հրաժեշտ տված ֆուտբոլիստներին, ապա նրանց թվում են Հրաչյա Միֆայելյանը, Կարեն Մուրադյանը, Արման Մինասյանը, Կարեն Խաչատրյանը եւ Կոնգոյի ֆուտբոլիստ Մակոսոն:

Փոփոխություններ կան նաեւ «Իմպուլսի» մարզչական կազմում: Ստեփան Բաղդասարյանի փոխարեն Արմեն Գյուլբուդաղյանցին կօգնի Արա Նիգոյանը, որի հետ գլխավոր մարզիչն աշխատել է դեռեւս «Բանանցում»: Իսկ «Իմպուլս-2»-ի ղեկը ստանձնել է Արմեն Սանամյանը, որը փոխարինել է Կարեն Բարսեղյանին:

Սոչիում թիմը ծրագրել է ստուգողական 3 հանդիպում: Առաջին երկու մրցակիցներն արդեն հայտնի են: «Իմպուլսը» կմրցի Սոչիի «Ժեմչուժինայի» եւ Աստրախանի «Վոլգարի» հետ:

# Աբրահամ-Շտուրմ մենամարտի անցկացումը չի բացառվում

**Sauerland Event պրոմոութերական ընկերության ղեկավարներ Վիլֆրիդ եւ Կալե Զաուերլանդները գերմանական Sport.de կայքէջին տված հարցազրույցում խոսել են նաեւ Արթուր Աբրահամի մասին, որը ներկայացնում է ընթերցողների ուշադրությանը:**




Անդրե Ուորդի հետ մայիսին կայանալիք կիսաեզրափակիչ մենամարտից առաջ Արթուրի համար մենամարտ կազմակերպելու հարցում առայժմ բանակցում ենք: Արթուրի համար այդ մենամարտը շատ կարեւոր է սեփական ուժերի հանդեպ վստահությունը վերականգնելու հարցում: Արթուրը սովոր է մշտապես մենամարտելու: Իհարկե, Ուորդի հետ մենամարտը հեշտ չի լինի, սակայն նա իր ֆիզիկական տվյալներով առավելություն չի ունենա Արթուրի նկատմամբ: Ուորդը սովորաբար սիրում է մերձամարտն ու միջին տարածությունից մենամարտելը, ինչը հոգեհարազատ է Աբրահամին:

Super Six մրցաշարի ավարտից հետո Արթուրը չի վերադառնա միջինքաշային կարգ, քանի որ մշտապես քաշ գցելու խնդիր է ունեցել: Չեմ բացառում հնարավոր մենամարտը Ֆելիքս Շտուրմի հետ: Հավանաբար նրանք մենամարտեն 74,5 կգ քաշային կարգում, քանի որ Շտուրմի համար էլ դժվար է միջինքաշային կարգի սահմաններում քաշ պահելը: Գուցե հաջողվի այդ մենամարտը կազմակերպել տարվա 2-րդ կեսին, սակայն դեռեւս շատ հարցեր կան չլուծված: Բացի այդ, Արթուրը հնարավորություն ունի հաղթելու Անդրե Ուորդին եւ այդ դեպքում նա պետք է եւս մեկ մենամարտ անցկացնի Super Six-ի եզրափակիչում:

# ՈւԵՖԱ-ն իր «Ոսկե գնդակը» կհանձնի

**ՈւԵՖԱ-ի նախագահ Միշել Պլատինին հայտարարել է, որ շուտով նոր մրցանակ կսահմանվի, որը հանձնվելու է Եվրոպայի լավագույն ֆուտբոլիստին: Պատճառն այն է, որ «Ֆրանս ֆուտբոլ» շաբաթաթերթի «Ոսկե գնդակ» մրցանակի մրցանակաբաշխությունն այլեւս չի անցկացվում: 2010-ից որոշվում է միայն աշխարհի լավագույն ֆուտբոլիստը, որին էլ հանձնվում է «Ոսկե գնդակը»:**

**Եվրոպայի լավագույն ֆուտբոլիստին որոշելու մրցույթին մասնակցելու են եվրոպական երկրների ֆուտբոլի ֆեդերացիաների ներկայացուցիչները, մարզիչներն ու մարզական լրագրողները: Նմանատիպ առաջին մրցանակը հաջորդ տարվա օգոստոսին կհանձնվի Մոնակոյում կայանալիք չեմպիոնների լիգայի խմբային մրցաշարի վիճակահանության ժամանակ:**

# Գոլազուրկ ոչ-ոքի

**Ֆուտբոլային նոր մրցաշրջանին նախապատրաստվող հայկական ակումբները մարզումներին զուգահեռ նաեւ ստուգողական հանդիպումներ են անցկացնում: Երեկ հերթական խաղը կայացավ ֆուտբոլի ակադեմիայի խաղադաշտում: Ուժերը չափեցին «Շիրակն» ու առաջնության բրոնզե մրցանակակիր «Ուլիսը»: Երկու թիմերում էլ նոր ֆուտբոլիստներ են ընդգրկվել, ուստի մարզիչները նման հանդիպումների միջոցով հնարավորություն են ստանում ծանոթանալու նորեկներին: Այս անգամ խաղը տեւեց 80 րոպե: Թեեւ կողմերի գործադրած ջանքերին, այս անգամ էլ դարպասները մնացին անառիկ: Հիշեցնենք, որ նախորդ խաղում էլ՝ «Շիրակի» եւ «Փյունիկի» մրցավեճում գրանցվել էր գոլազուրկ ոչ-ոքի:**

# Մարզական «Օսկարի» հավակնորդները հայտնի են

**Հայտնի են դարձել մարզական «Օսկարի»՝ Laureus World Sports Awards մրցանակի հավակնորդները: 2010-ի աշխարհի լավագույն մարզիկի մրցանակին հավակնում են իսպանացի թենիսիստ Ռաֆայել Նադալը, գերմանացի ավտոմրցարշավորդ Սեբաստիան Ֆետելը, ֆիլիպինցի բռնցքամարտիկ Մենի Պակյաոն, ամերիկացի բասկետբոլիստ Կոբի Բրայանտը եւ «Բարսելոնի» ֆուտբոլիստներ, իսպանացի Անդրես Ինիեստան ու արգենտինացի Լիոնել Մեսին:**

**Լավագույն մարզուհու համար սահմանված մրցանակի հավակնորդուհիների թվում են թենիսիստուհիներ, ամերիկացի Սերենա Ուիլյամսը, բելգիացի Կիմ Կլայստերսը եւ դանիացի Կարոլին Վոզնյացկին, ամերիկացի լեռնադահուկորդուհի Լինդսի Վոնը, թեթեւատլետուհիներ Ջեսիկա Էնիսը (Մեծ Բրիտանիա) եւ Բլանկա Վլասիչը (Խորվաթիա):**

ԹԵՆԻՍ

# Նալբանդյանը մտավ կիսաեզրափակիչ

**Դավիթ Նալբանդյանը հաջող է հանդես գալիս Նոր Զելանդիայի Օքլենդ քաղաքում ընթացող թենիսի մրցաշարում: Երկրորդ փուլում նա պարտության մատնեց գերմանացի Ֆիլիպ Պետցշներին (6-3, 6-2), իսկ քառորդ եզրափակիչում առավելության հասավ ամերիկացի Ջոն Իսների նկատմամբ (6-4, 7-6): Կիսաեզրափակիչ են դուրս եկել նաեւ իսպանացիներ Դավիթ Ֆեռերն ու Նիկոլաս Ալմագրոն եւ կոլումբիացի Հիրալդո Սանտյագոն:**

# Բաբուջյանը մոտեցավ առաջատարներին

**Նյու Դելիի շախմատի մրցաշարում հաղթարշավն է շարունակում Լեւոն Բաբուջյանը՝ տուրից տուր բարելավելով դիրքերը: 7-րդ տուրում նա 5-րդ անընդմեջ հաղթանակը տոնեց՝ սեւերով պարտության մատնելով Շիվանանդային: Բաբուջյանը վաստակեց 6 միավոր եւ ընդհուպ մոտեցավ առաջատարներին: Հայ շախմատիստը զբաղեցնում է 7-րդ հորիզոնականը:**

**Մրցաշարում եռիշխանություն է: 6,5-ական միավորով աղյուսակը գլխավորում են հնդիկ Պարիմարջան Նեգին, Սլովենիան ներկայացնող Լուկա Լենիչը եւ ուկրաինացի Միխայլո Ալեքսիենկոն: Պարիմարջանը հաշտություն կնքեց Ալեքսանդր Արեշչենկոյի հետ: Լենիչը հաղթեց Պրասադ Արունին, իսկ Ալեքսիենկոն պարտության մատնեց Աբհիջեթ Գուպտային:**

# Տղիտակների հաղթական երթը

**Հայաստանի շախմատի կանանց առաջնության 3-րդ տուրի բոլոր 5 պարտիաներն էլ ավարտվեցին սպիտակ խաղաքարերով հանդես եկած շախմատիստուհիների հաղթանակով: Տուրն անվանեց մրցաշարի նոր միանձնյա առաջատարին: 2,5 միավորով աղյուսակը գլխավորեց միջազգային վարպետ Սիրանուշ Անդրեասյանը, որը հաղթեց Մարիա Գեւորգյանին: 2-ական միավորով առաջատարին հետապնդում են Շուշան Սարգսյանը, Նարինե Գասպարյանը, Անահիտ Խառասյանն ու Աստղիկ Մեսեղջյանը:**

**Շուշան Սարգսյանն անդրանիկ պարտությունը կրեց՝ զիջելով Արմինե Բաբայանին: Անհաջող մեկնարկից հետո 2-րդ անընդմեջ հաղթանակը տոնեց հանրապետության գործող չեմպիոնուհի Անահիտ Խառասյանը՝ առավելության հասնելով Լիա Մարտիրոսյանի նկատմամբ: Առայժմ ոչ մի կետ չի հաջողվում միավոր վաստակել մրցաշարի միակ գրոսմայստեր Նաիրա Մովսիսյանին, որն արդեն 3-րդ անընդմեջ պարտությունը կրեց Աստղիկ Մեսեղջյանի հետ մրցավեճում: Անհաջող է խաղում նաեւ Վարդուհի Քալաշյանը, որը կես միավորով նախավերջին՝ 9-րդ տեղում է: Նա պարտվեց Նարինե Գասպարյանին, որն անդրանիկ հաղթանակը տոնեց:**

**Այսօր կայանալիք 4-րդ տուրում առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում Սարգսյան-Անդրեասյան, Խառասյան-Մեսեղջյան պարտիաները:**



ՖՈՏՈԼՈՒՐ

# Արոնյանն ու Սարգսյանը կմասնակցեն Վեյք Ան Զեեի մրցաշարին

**Հունվարի 15-ին հոլանդական Վեյք Ան Զեե քաղաքում կմեկնարկի շախմատի ավանդական մրցաշարը: Գլխավոր մրցաշարում հանդես կգան 14 գրոսմայստերներ, որոնց թվում է Լեւոն Արոնյանը: Նա իր վարկանիշով (2805) մրցաշարի մասնակիցների մեջ 3-րդն է նորվեգացի Մագնուս Կառլսենից (2814) եւ աշխարհի չեմպիոն Վիշվանաթան Անանդից (2810) հետո:**

**Մրցաշարին կմասնակցեն նաեւ Վլադիմիր Կրամնիկը (2784), Ալեքսանդր Գրիշչուկը (2773), Հիկարու Նակամուրան (2751), Ռուսլան Պոնոմարյովը (2744), Յան Նեպոմնյաշչին (2733), Վան Հաոն (2731), Ալեքսեյ Շիրովը (2722), Մաքսիմ Վաշիե-Լագրավը (2715), Անիշ Գիրին (2686), Յան Սմիթսը (2662) եւ Էրվին Լ՛Ամին (2624):**

**B խմբի մրցաշարի 14 մասնակիցների թվում է Գաբրիել Սարգսյանը (2667): Նա իր վարկանիշով զիջում է Ռադոսլավ Վոյտաշեկին (2726), Դավիթ Նավարային (2708), Լորան Ֆրեսինեին (2707), Զախար Եֆիմենկոյին (2701) եւ Ուեսլի Սոյին (2673): Գաբրիելի մրցակիցների թվում կլինեն նաեւ Լե Կուանգ Լյեմը (2664), Լյուկ Մակշեյնը (2664), Սուրյա Գանգուլին (2651), Լի Չաոն (2649), Յոն Լյուդվիգ Համերը (2647), Վլադիսլավ Տկաչովը (2636), Ֆրիսո Նայբուրը (2584) եւ Վուտեր Սպուլմանը (2547):**

**Երկու մրցաշարերն էլ կանցկացվեն շրջանաձեւ մրցակարգով: Հաղթողները հայտնի կդառնան հունվարի 30-ին:**

# Սվեշնիկովն օգտվեց Գաբուզյանի «սայթաքումից»

**Շախմատի ակադեմիայում ընթացող Անդրանիկ Մարգարյանի հուշամրցաշարի 6-րդ տուրում առաջատարներից մեկը՝ Հովհաննես Գաբուզյանը «սայթաքեց»՝ կրելով առաջին պարտությունը: Նրա մրցակիցը Գրիգոր Դիլանյանն էր: Գաբուզյանի անհաջողությունից օգտվեց լատվիացի գրոսմայստեր Եվգենի Սվեշնիկովը, որը ոչ-ոքի խաղալով Նիկիտա Մաշինյանի հետ, 4,5 միավորով դարձավ մրցաշարի միանձնյա առաջատար: Գաբուզյանը նրան զիջում է կես միավորով:**

**3,5-ական միավորով առաջատարներին հետապնդում են Նիկիտա Մաշինյանը, Ռոբերտ Աղասարյանն ու Համեդ Մոսավիանը: Աղասարյանը զիջեց Յուրի Համբարձումյանին, իսկ Մոսավիանը ոչ-ոքի խաղաց Դավիթ Շահինյանի հետ: Կիրիլ Ալեքսեենկոն հաղթեց Դավիթ Քալաշյանին, որը կես միավորով եզրափակում է աղյուսակը:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

# Թողարկվել են նոր հուշադրամներ

## «Միսաք Մեծարենցի ծննդյան 125-ամյակ»

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը շրջանառության մեջ է մտցրել նոր ոսկե հուշադրամ՝ նվիրված Միսաք Մեծարենցի (1886–1908 թթ.) ծննդյան 125-ամյակին:

Հուշադրամի դիմերեսին աստղերի ֆոնի վրա ոճավորված գրչի պատկեր է: Դաշտի ներքեւում երկու տողով նշված է անվանական արժեքը համապատասխանաբար՝ «10000» եւ «ԴՐԱՄ»: Դաշտի վերեւում մանր տառատեսակով նշված է թողարկման տարեթիվը՝ «2011»: Եզրաշուրթի մոտ շրջագծով մակագրված է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ»:



Հուշադրամի դարձերեսին Միսաք Մեծարենցի դիմապատկերն է, որից աջ ուղղահայաց մակագրված է «ՄԻՍԱՔ ՄԵԾԱՐԵՆՑ»: Մակագրությունից աջ երկու տողով հորիզոնական նշված են Մեծարենցի ծննդյան եւ մահված տարեթվերը համապատասխանաբար՝ «1886» եւ «1908»: Մակագրությունը եւ տարեթվերը առանձնացված են ուղղահայաց գծով:

Հուշադրամը շրջանագծով երկու կողմից ունի ուռուցիկ եզրաշուրթ:

Ուրվագծերի հեղինակն է Էդուարդ Կուրղինյանը: Հուշադրամը հատվել է Նիդերլանդների արքայական դրամահատարանում:

**Հուշադրամի բնութագիրը.**

| | |
|---|---|
| Անվանական արժեքը | 10000 դրամ |
| Մետաղը եւ հարգը | ոսկի, 9000 |
| Զանգվածը | 8,6 գ |
| Տրամագիծը | 22,0 մմ |
| Դրամաշուրթը | ատամնավոր |
| Որակը | պրուֆ |
| Տպաքանակը | 1000 հատ |

## «Թորոս Ռոսլինի ծննդյան 800-ամյակ»

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը շր-



ջանառության մեջ է մտցրել նոր ոսկե հուշադրամ՝ նվիրված Թորոս Ռոսլինի ծննդյան 800-ամյակին:

Հուշադրամի դիմերեսին պատկերված է Թորոս Ռոսլինի մանրանկարչությունից մի դրվագ, որի վերեւում մանր տառատեսակով նշված է թողարկման տարեթիվը՝ «2011»: Եզրաշուրթի մոտ շրջագծով մակագրված են վերեւում՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ», իսկ ներքեւում՝ `ՏԱՍԸ ՀԱԶԱՐ ԴՐԱՄ՛: Մակագրությունները երկու տեղում առանձնացված են մեկական կետով:

Հուշադրամի դարձերեսին պատկերված է Թորոս Ռոսլինի մանրանկարչությունից մի դրվագ, որի ներքեւի մասում նշված է՝ «800»: Եզրաշուրթի մոտ շրջագծով մակագրված են, վերեւում հայերեն՝ «ԹՈՐՈՍ ՌՈՍԼԻՆ», իսկ ներքեւում անգլերեն՝ «TOROS ROSLIN»: Մակագրությունները երկու տեղում առանձնացված են մեկական կետով:

Հուշադրամը շրջանագծով երկու կողմից ունի ուռուցիկ եզրաշուրթ:

Ուրվագծերի հեղինակն է Էդուարդ Կուրղինյանը: Հուշադրամը հատվել է Նիդերլանդների արքայական դրամահատարանում:

**Հուշադրամի բնութագիրը.**

| | |
|---|---|
| Անվանական արժեքը | 10000 դրամ |
| Մետաղը եւ հարգը | ոսկի, 9000 |
| Զանգվածը | 8,6 գ |
| Տրամագիծը | 22,0 մմ |
| Դրամաշուրթը | ատամնավոր |
| Որակը | պրուֆ |
| Տպաքանակը | 1000 հատ |

## «Անի -1050»

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը թո-



ղարկել է Անիի հիմնադրման 1050-ամյակին նվիրված ոսկե հուշադրամ:

Հուշադրամի դիմերեսին պատկերված է Անի քաղաքի պարիսպի մի հատված եւ դարպասներից մեկի վրա պահպանված քաղաքի զինանշանը՝ հովազի կենդանակերպ խորհրդանիշը, որից վերեւ առկա է հավերժության վարդյակ: Ներքեւում երկու տողով նշված է անվանական արժեքը համապատասխանաբար՝ «1000» եւ «ԴՐԱՄ»: Ամբողջը եզերված է գծավոր շրջանագծով: Շրջանագծի եւ եզրաշուրթի միջեւ շրջագծով մակագրված է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՈՒՆ»: Բառերի միջեւ վերեւի ձախում մանր տառատեսակով հորիզոնական նշված է թողարկման տարեթիվը՝ «2011»:

Հուշադրամի դարձերեսին պատկերված է Անիի Մայր տաճարը, որից ներքեւ երեք տողոր մակագրված են համապատասխանաբար՝ «ԱՆԻ», «ՄԱՅՐԱՔԱՂԱՔ» եւ «1050»: Եզրաշուրթը շրջանագծով ձեւավորված է զարդաքանդակով:

Հուշադրամը շրջանագծով երկու կողմից ունի ուռուցիկ եզրաշուրթ:

Ուրվագծերի հեղինակն է Էդուարդ Կուրղինյանը: Հուշադրամը հատվել է Նիդերլանդների արքայական դրամահատարանում:

**Հուշադրամի բնութագիրը.**

| | |
|---|---|
| Անվանական արժեքը | 1000 դրամ |
| Մետաղը եւ հարգը | ոսկի 5850 |
| Զանգվածը | 15,6 գ |
| Տրամագիծը | 26,0 մմ |
| Դրամաշուրթը | հարթ |
| Որակը | հատուկ |
| Տպաքանակը | 1000 հատ |

## «Արտաշատ -2200»

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը թո-



ղարկել է Արտաշատի հիմնադրման 2200-ամյակին նվիրված ոսկե հուշադրամ:

Հուշադրամի դիմերեսին պատկերված է Արտաշատի քաղաքային մետաղադրամի (մ. թ. 1-2 դարեր) մեկ կողմը, որը ներկայացված է դիցուհի Տիխվեի պատկերով՝ աշտարակաձեւ թագով: Ներքեւում երկու տողով նշված է անվանական արժեքը համապատասխանաբար՝ «1000» եւ «ԴՐԱՄ»: Ամբողջը եզերված է գծավոր շրջանագծով: Շրջանագծի եւ եզրաշուրթի միջեւ շրջագծով մակագրված է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՈՒՆ»: Բառերի միջեւ վերեւի ձախում մանր տառատեսակով հորիզոնական նշված է թողարկման տարեթիվը՝ «2011»:

Հուշադրամի դարձերեսին պատկերված է Արտաշատի քաղաքային մետաղադրամի մյուս կողմը, որը ներկայացված է հաղթության դիցուհի Նիկեի պատկերով: Պատկերից ներքեւ երեք տողով մակագրված են համապատասխանաբար՝ «ԱՐՏԱՇԱՏ», «ՄԱՅՐԱՔԱՂԱՔ» եւ «2200»: Եզրաշուրթը շրջանագծով ձեւավորված է զարդաքանդակով:

Հուշադրամը շրջանագծով երկու կողմից ունի ուռուցիկ եզրաշուրթ:

Ուրվագծերի հեղինակն է Էդուարդ Կուրղինյանը: Հուշադրամը հատվել է Նիդերլանդների արքայական դրամահատարանում:

**Հուշադրամի բնութագիրը.**

| | |
|---|---|
| Անվանական արժեքը | 1000 դրամ |
| Մետաղը եւ հարգը | ոսկի 5850 |
| Զանգվածը | 15,6 գ |
| Տրամագիծը | 26,0 մմ |
| Դրամաշուրթը | հարթ |
| Որակը | հատուկ |
| Տպաքանակը | 1000 հատ |

## «Վիեննայի Մխիթարյան միաբանության հիմնադրման 200-ամյակ»



Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը թողարկել է Վիեննայի Մխիթարյան միաբանության հիմնադրման 200-ամյակին նվիրված արծաթե հուշադրամ:

Հուշադրամի դիմերեսին պատկերված են Միաբանությունում գտնվող գրատահոցը եւ 1775 թ. մայիսի 30-ին Ավստրիայի կայսրուհի Մարիա Թերեզայի կողմից տրված հատուկ արտոնագիրը, որով ճանաչվում է Մխիթարյան միաբանության կրոնական կարգը: Դաշտի ներքեւի աջում երկու տողով նշված է անվանական արժեքը համապատասխանաբար՝ «1000» եւ «ԴՐԱՄ», իսկ ձախում՝ փոքր տառատեսակով նշված է թողարկման տարեթիվը՝ «2011»: Ամբողջը եզերված է գծավոր շրջանագծով: Շրջանագծի եւ եզրաշուրթի միջեւ շրջագծով մակագրված է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ»: Վերեւում եզրաշուրթի մոտ մակագրության սկզբի եւ վերջի բառերը առանձնացված են կետով:

Հուշադրամի դարձերեսին պատկերված են՝ աջում Վիեննայում գտնվող միաբանության շենքի շքամուտքը, իսկ ձախում՝ պատի շարվածքի ֆոնի վրա միաբանության զինանշանը: Պատկերների միջեւ առկա է ուղղահայաց մակագրություն՝ «ՎԻԵՆՆԱՅԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ»: Վերեւի աջում հորիզոնական մակագրված է «200-ամյակ»:

Հուշադրամը շրջանագծով երկու կողմից ունի ուռուցիկ եզրաշուրթ:

Ուրվագծերի հեղինակն է Էդուարդ Կուրղինյանը: Հուշադրամը հատվել է Նիդերլանդների արքայական դրամահատարանում:

**Հուշադրամի բնութագիրը.**

| | |
|---|---|
| Անվանական արժեքը | 1000 դրամ |
| Մետաղը | արծաթ, 9250 |
| Քաշը | 33,6 գ |
| Տրամագիծը | 40,00 մմ |
| Դրամաշուրթը | ատամնավոր |
| Որակը | պրուֆ |
| Տպաքանակը | 500 հատ |


**«Էկոնոմիկա եւ Իրավունք» ամսագիր**

**Ինչպես անթերի վարել հաշվապահությունը եւ խուսափել հաշվապահական, հարկային եւ իրավաբանական սխալներից**

▼ Օրենսդրական նորություններ - Պարզաբանումներ ու Խորհրդատվություն

▼ «Էկոնոմիկա եւ Իրավունք» - ամսագիր ղեկավարների եւ մասնագետների համար

*Բաժանորդագրվելու համար զանգահարեք 54-24-81, 54-74-81*


## Ուշադրություն

Հարգելի քաղաքացիներ, հիշեցնում ենք, որ տարեսկզբից Երեւանում կենսաթոշակների վճարումն իրականացվում է Հայփոստի փոստային բաժանմունքներից, եւ փոստատարների առաքման միջոցով: Երկու դեպքում էլ վճարումը կատարվում է անվճար: Այսինքն՝ թոշակառուները որեւէ պարագայում չպետք է վճարում կատարեն կենսաթոշակ ստանալիս՝ ոչ փոստային բաժանմունքում, ոչ էլ փոստատարին:

Խախտումների մասին խնդրում ենք անմիջապես տեղեկացնել «Հայփոստ» ՓԲԸ-ում այսուհետ գործող թեժ գծի հեռախոսահամարներով. 514-666, 514-667:

**«Հայփոստ» ՓԲԸ**

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝13.1.2011, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: